№ 9 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 16

1907

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 16 № 9

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ.

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱՑՎԱԾ Է ՆԱԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

Տարեկան գինն է	Թիֆլիսում 4 ր.	Ուրիշ տեղեր՝ 5 ր.
Կէս տարվայ	» » 2 ր.	» » 2 ր. 50 կ.
3 ամսվայ	» » » 1 ր.	» » 1 ր. 25 կ.
1 ամսվայ	» » » — 40 կ.	» » — 50 կ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 թւին, բացի 50 № թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունաւոր ՏԱԽՏԱԿ-ՕՐԱՑՈՅՑ, 2) միջագիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշոկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջագիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրոպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ:

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-Հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. ե.) տա. 20—20

Յունվարի 15-ին, երկուշաբթի,

Լոյս տեսաւ

„ԱՆՆԱՄՈՒՍ"

երգիծաբանական շաբաթաթերթի առաջին համարը:

Բացված է Բաժանորդագրութիւն

Թիֆլիսում տարեկան 4 րուբլի, օտար քաղաքներում 5 րուբլի, հատով 10 կոպէկ: Ընդունվում են յայտարարութիւններ զանազան լեզուներով: Խմբագրատունը բաց է ցերեկվայ 12—2 ժ., երեկոյեան 4—6 ժամը: Հասցէն՝ Թիֆլիս, Սերգիեվսկայա № 3:

տա. 3—3

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ:

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»: 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն: 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին): 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.: 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկար:

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր:

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րու.: Կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.: Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.: Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէճեան

(ա. օ.) տա. 5—10

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Նիկոլաևսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէքտրօթերապիա:
Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ.:
Ի. Ն. ԱԻՆՏԻՕԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ս. Ա. ԼԻՍԻՑԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.:
Մ. Փ. ԿԻՄՕՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.:
Պ. Ա. ԲԵՑԵՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.:
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն:

Հիւանդանոցում բժշկումն հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն:

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան. Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից:

տա. ե. հ. կ. 12—100

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՋ"

հումոր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

V-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ"

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.:

Բաժանորդներին ուղարկվեց ձրի երբև «Սափրիչի» 1 պրեմիան:

Տարեկան բաժանորդագինն է պրեմիայով 2 րուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 րուբլի 50 կոպ.:

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓՐԻՋ»-ի խմբագրութիւն

ե. չ. տա. 25—25

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց; № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴՆԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ՆԱՆՋԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.:
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. չեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.:
Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ. չորեքշ., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.:
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի ԶՈՒԴՆՕՎՍԿԻ }
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԶՕՐՕԳԾԵՎԱ.—Մասսաժ. 11—4. ժ.
Ս. ԵՍ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ Գ, ԶՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը:
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը:

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անզգամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան:

տա. (ա. օ.) 44—144

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, յունվարի 16 ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

[illegible] նիքների համար

կը ներկայացնէ

Ոճրագործի ընտանիքը

Դրամա 5 արար., Ջիակոմետտի, թարգ. Մ. Աւալեանի

Մասնակցում են. տ.տ. Արաքս, Աւետեան, Վարդուհի, պ.պ. Աբէլեան, Աւետեան, Ազաջեան, Ադիլխանեան, Մանուէլեան և ուրիշները:

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է

Տեղերի գները 1 րուբլուց մինչև 30 կոպ.:

Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են ամեն մի տոմսակին 1 րուբլի ևս:

Ռեժիսեօր Յ. Աբէլեան

տա. 1—1

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«ԱՇԽԱՏԱՆՔԸ»

Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ

դադարեցված է

Բաժանորդները բաւարարութիւն կը ստանան համապատասխան թերթով:

Խմբագրութիւն «Աշխատանք» ի.

1—1

Մանթաշեան վաճառականական ուսումնարանը

յայտնում է ի գիտութիւն պ. պ. ծնողների, որ աշակերտների ընդունելութիւնը պատրաստական դասարանում շարունակվում է:

Հալաբար, Պրավիանսկայա հրապարակ:

(2՝ ե.) տա. 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Առաջիկայ ընտրութիւնները. Աղէտեալների օգտին. Ընտրութիւնները Կովկասում. Մամուլ. Մի դասախօսութիւն. Նամակ Մօսկվայից. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Թռուցիկ տպաւորութիւններ. Նուխին և հայ-թուրքական ընդհարումները. Ռուս հայկական երեկոյթը. Անհատները չեն ժողովրդին փրկողը. Տօները Ախալցխայում. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Մերսին Ադանայի և Կ. Պօլիս-Բաղդադի երկաթուղիները. Գերմանիան Ռուսաստանի և Անգլիայի դէմ Պարսկաստանում. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մենք խնդրել էինք նոր բաժանորդագրվել ցանկացողներին շտապել յայտնելու իրանց ցանկութեան մասին վաղօրօք, որպէս զի թէ հասցէները կարող լինէինք ժամանակին տպագրելու և թէ լրագրի առաքումը չընդհատելու:

Սակայն շատ շատերը դարձեալ ուշացրել են իրանց դիմումները և այժմ են մեծ թւով ուղարկում մեզ իրանց հասցէները: Միևնոյն ժամանակ ստանում ենք հեռագիրներ և նամակներ չը դադարեցնելու լրագրի առաքումը:

Մենք նորից խնդրում ենք այն բոլոր անձերից, որոնք դիտաւորութիւն ունեն լրագիր ստանալ, յայտնել այդ մասին վաղօրօք, որովհետև բացի հասցէներ տպելու խնդրից, կայ և լրագրի օրինակների թւի տպագրութեան հարցը: Եթէ մենք կարողանայինք առաջուց նախատեսել պահանջի քանակը, նրա համեմատ էլ կը պատրաստէինք այնքան աւելորդ օրինակներ: Մենք անշուշտ որոշ պաշար պահում ենք, բայց անցեալ տարիների փորձը ցոյց է տալիս, որ երբեմն լրագրի օրինակներ պակասել են և մենք անկարող ենք եղել բաւարարութիւն տալու նոր բաժանորդներին:

Այդ հանգամանքը պէտք է աչքի առաջ ունենալ և հնարաւորութիւն տալ մեզ լրագրի առաքման գործը փութացնել ու դիւրացնել:

Համաձայն մեր խոստման, մենք ուղարկեցինք «Մշակի» համարները մեր հին բաժանորդներին և այդպիսով ամեն մի թիւրիմացութիւն և մեր պարտականութեան մասին առարկութիւն վերացրինք մէջտեղից:

Յիշեցնում ենք բաժանորդ գրվել ցանկացողներին, որ ապառիկ բաժանորդագրութիւն չենք ընդունում, իսկ այն անձերին, որոնք հնարաւորութիւն չունեն մի անգամից ուղարկել տարեկան բաժանորդագինը, վճարել մաս-մաս, հոգալով սակայն, որ մասնավճարները ուղարկվեն իրանց ժամանակին, որպէս զի լրագրի առաքումը չենթարկվի ընդհատումների:

ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Ընտրութիւնները արդէն սկսվել են:

Ներկայումս գիւղական շրջաններում տեղի ունեն ընտրութիւնները, իսկ մի 10—12 օրից յետոյ կը կատարվեն պատուիրակների ընտրութիւններ գաւառական կենտրոններում և Թիֆլիսում:

Այն բոլոր անձերի համար, որոնք ունեն ընտրական իրաւունք, [illegible] է պատուիրակների հարցը:

Ո՞ւմ ընտրել պատուիրակ:

Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է, որ ընտրողները իրանց նախկին խորհրդակցութիւններին վերջնական ձևակերպութիւն տան և կազմեն պատուիրակների ցուցակներ:

Թիֆլիս քաղաքի մի քանի քաղաքամասերում արդէն կազմվել են այդպիսի ցուցակներ զանազան քաղաքական կուսակցութիւնների կողմից, իսկ միւսներում պէտք է կազմվեն այս օրերս:

Մենք մի ընդհանուր ցանկութիւն կարող ենք յայտնել, որ ընտրողները աշխատէին ցուցակներ կազմելու ժամանակ կարելիին չափ գիտակցական լինել և կանգ առնէին այնպիսի անձնաւորութիւնների վրա, որոնք անպայման առաջադէմ են, հաստատ համոզմունքների տէր և լուրջ մտածողութեան ներկայացուցիչներ:

II

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, մեր համակրութիւնը հայ դեմոկրատիական և ժողովրդական ազատութեան կուսակցութիւնների կողմն է: Մենք այն կարծիքին ենք, որ Ռուսաստանի և մեր երկրի ներկայ շրջանում այդ կուսակցութիւնները հարազատ կերպով են ըմբռնել քաղաքական և հասարակական պահանջները և կարող են նպաստել դուրս գալու ժողովուրդին այն խառն և ծանր վիճակից, որի մէջ նա ընկել է:

Կարող կը լինեն արդեօք Թիֆլիսում և Անդրկովկասում այդ կուսակցութիւնները անցկացնել իրանց թեկնածուներին, չը գիտենք. բայց պէտք է աշխատենք, որ այդ կուսակցութիւններին համակրողները օգտվեն իրանց քուէներից, իրանց կամքը արտայայտելու համար:

Շատ շատերը զանազան պատճառներով խուսափում են ընտրութիւններից և իրանց ցանկացած պատուիրակների թեկնածութիւնը պաշտպանելու իրանց քուէներով:

Դա արդէն յանցանք է հասարակութեան դէմ: Դա մի զանցառութիւն է, դէպի որը չէ կարելի վերաբերվել ներողամտութեամբ:

III

Ընտրութիւնները կատարվում են գաղտնի քուէարկութեամբ:

Իւրաքանչիւր ընտրող պէտք է տայ փակված-ծալված մի թուղթ, որի բովանդակութիւնը անմատչելի է ուրիշների համար:

Ուստի մի գործակատար, մի պաշտօնեայ կամ մի ուրիշ կախումն ունեցող անձ ամենևին կարող է հաշուի չառնել իր տիրոջ, իր գլխաւորի, իր մեծաւորի թելադրութիւնները և կազմել իր ցուցակները այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում. Նրա քուէն կը մնայ գաղտնի և նա ազատ կը լինի անձնական անախորժութիւններից:

Ընտրողներ, իրագործեցէք ձեր ընտրական իրաւունքը: Մասնակցեցէք խորհրդակցութիւններին, կազմեցէք ցուցակներ և համոզեցէք բոլորին գնալ ընտրութիւնների:

Աչքի առաջ ունեցէք, որ պատուիրակները և ապագայ պատգամաւորները խօսելու են ձեր անունից, ձեր բերանից: Ուրեմն ամեն ջանք գործ դրէք, որ նրանք լինեն իսկական ներկայացուցիչներ ժողովրդի մեծամասնութեան:

Ա. Քալանթար

ԱՂԷՏԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Առաջիկայ կիրակի օր, դեկտեմբերի 21-ին, Թիֆլիսի արտիստական գահլիճում տեղի կունենայ մի երեկոյթ Գանձակի նահանգի աղէտեալների օգտին:

Երեկոյթը, որ կազմվում է Փոխարքայի ամուսին կոմսուհի Վօրօնցօվա-Դաշկօվայի նախաձեռնութեամբ, նպատակ ունի ուժեղացնել այն միջոցները, որոնցով հասարակութիւնը օգնական է հանդիսացել կարօտ ժողովրդին:

Կարիքները շատ մեծ են և արտայայտվում են զանազան կերպերով: Գիւղացիները հաց չունին ուտելու համար, սերմացու չունին իրանց արտերը ցանելու համար, լծկան եզներ և գործիքներ չունին հողագործական աշխատանքները կատար ածելու համար:

Աղէտին ենթարկված տեղերի թէ հայ և թէ թուրք գիւղացիները սոսկալի վիճակի մէջ են: Եթէ ժամանակին օգնութեան չը հասնենք, գիւղերում կարող են երևալ վտանգաւոր հիւանդութիւններ, որոնք նոր դժբաղդութիւններ կը բերեն ժողովրդի գլխին:

Հասարակութիւնը պիտի շարունակէ օժանդակել գիւղացուն, ուղարկելով նպաստները այն բոլոր հաստատութիւններին, որոնք զբաղված են աղէտեալների օգնութեան գործով:

Իսկ Թիֆլիսցիները բացի այդ թող առաջիկայ երեկոյթին անեն փոքր ի շատէ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մի խումբ մարդիկ դիմել են քաղաքագլուխ իշ. Ջերքեզովին, խնդրելով միջոցներ ձեռք առնել մի քանի անձանց կողմից (գուցէ կուսակցութիւնների) կատարվող զեղծումների դէմ, որոնք արդէն տեղի են ունեցել ընտրողական ծրարները բաժանելու ժամանակ: Խնդիրը նրանումն է, որ ընտրողներից մի քանիսը ստացել են ծրարներ, որոնց թերթիկների վրա գրված են եղել լիազօրների անունները: Այն ընտրողը, որ ստացել է մի այդ տեսակ հրաւիրաթերթ, զրկվում է հնարաւորութիւնից իր լիազօրները առաջարկելու նոյնպէս և իր ձայնը տալու, որովհետև ուրիշ ընտրողական թերթիկներ չունեն: Եղել է դէպք, երբ միևնոյն ընտրողը ստացել է երկու հրաւիրաթերթ, մէկը՝ ոստիկանութիւնից, իսկ միւսը՝ քաղաքային վարչութիւնից, մինչդեռ վերջինս ոչ մի հրաւիրաթերթ չէ ուղարկում: Այդ բողոքողները, յայտնել են, որ եթէ այդ տեսակ զեղծումները շարունակվեն, այն ժամանակ նրանք իրաւունք կունենան ընտրութիւնները բեկելու: Քաղաքագլուխը խոստացել է միջոցներ ձեռք առնել դրա դէմ:

ՄԱՄՈՒԼ

Ռուսաց պրոգրեսիվ մամուլը կանգ է առնում Մոսկվայի «Новь» լրագրի արած մերկացումների վրա, որը մատնանշում է, որ «շըրջաններին» բոլոր ռէակցիօն մաքերը թելադրող սուֆլեօրը ազնուական հողատիրական կազմակերպութիւնն է:

Այդ թագնված սուֆլեօրի մասին,—ասում է «Страна» լրագիրը,—մօտ ժամանակներս մի շատ ուշադրաւ տեղեկութիւն տուեց մի ինչ որ ազնուական Ա. Զիբին, որի կարդացած զեկուցումը Նիժեգօրօդեան ազնուականութեան ժողովի արտակարգ սեսսիայում in extenso արձանագրված է «Новь» լրագրում:

Անցեալ տարվայ դեկտեմբերի 14-ին տեղի ունեցած ժողովում քննվել է Նիժեգօրօդեան ազնուականութիւնը հողատէրերի և ազնուականական միացեալ կազմակերպութեան դաշնակցութեան հետ միացնելու հարցը: Շնորհիւ ժողովի պրօգրեսսիւ տարրերի միահամուռ դիմադրութեան, այդ առաջարկութիւնը մերժվել է 24 ձայնով ընդդէմ 23 ի: Չորրորդ օրը, 16-ին, ռէակցիօներների խմբակը մտցրել է նոր առաջարկութիւն՝ յատկացնել մի որևէ գումար յօգուտ հողատէրերի դաշնակցութեան. երբ այդ էլ մերժվեց, յիշեալ խումբը բարձրացրեց միացեալ համառուսական ազնուականութեան կազմակերպութեանը նիւթական օժանդակութիւն յատկացնելու հարցը: Միևնոյն ժամանակ այդ կազմակերպութեան ամենաազդեցիկ անդամներից մէկը՝ ազնուական Ա. Զիբինը ծանօթացրել է ժողովին կազմակերպութեան մատուցած վերջին ծառայութիւնների հետ ներքին քաղաքականութեան խնդիրներում: Զիբինի ասելով միացեալ ազնուականութեան խորհուրդը ներկայումս շատ մեծ դեր է խաղում և զգալի կերպով ազդում է Ստոլիպինի կաբինետի վրա: Այդ խորհրդի նախաձեռնութեամբ էին ձեռնարկված կառավարութեան ամենագլխաւոր քաղաքական ակտերը, և նոյն իսկ Գորեմիկինի մինիստրութեան վերջին օրերը իրանց վրա կրում են խորհրդի ազդեցութեան դրոշմը:

Հաղորդելով այդ կարևոր տեղեկութիւնները, Ի. Պետրունկեվիչը «Рѣчь» լրագրի մէջ հետևեալ խորհրդածութիւններն է անում.

Եթէ ժողովրդի այն տենդային գրգռման դրութիւնը, կուի այն էկցեսսները, որոնք անընդհատ տանջում են արիւնաքամ եղող երկիրը, որոնում են իրանց բացատրութիւնները, ապա ուրեմն նրանք գտնում են հիմք և նոյնիսկ արդարացումն միացեալ ազնուականութեան Նիժեգօրոդեան ներկայացուցիչների անկեղծ խոստովանութեան համար: Բազմամիլիօն ժողովրդի կառավարութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ այն դասակարգի ծառան, որ գտնում է նիւթականապէս և մուրացկան դէպի իր հայրենիքը տածած սիրոյ մէջ: Մեզ վախեցնում է բանւոր պրօլետարիատի յեղափոխութիւնը և դիկտատուրան, մինչդեռ մեզ արդէն խեղդում է խելքի և արդարութեան պրօլետարիատի դիկտատուրան: Ռուսաստանը իր հազարամեայ պատմութեան ընթացքում շատ վիշտ կրած լինելով, տարած լինելով բռնապետութեան և ճորտական իրաւունքի ծանր բեռը և պատրաստ լինելով հոկտեմբերի 17-ի մանիֆեստից յետոյ լի կրծքով ազատ շունչ քաշելու, նորից է ընկել Բօրօբինսկիների Նէյդգարդների և Զիբինների ծուղակի մէջ, որպէս զի խորտակվի խայտառակված, ստորացած և քաղցած:

Հանելուկային աստղաւոր պալատը մերկացրել է իր կազմը, իր նպատակները և այն միջոցները, ինչ որ ունի: Խաղաթղթերը բացված են, և այժմ մենք գիտենք, թէ ով է տանում Ռուսաստանը դէպի անկումը:

*

Մօտ ժամանակներս մայրաքաղաքի լրագիրները հաղորդեցին Սմօլենսկի բանտի քաղաքական կալանաւորների ծանր, անտանելի վիճակի մասին, որը դրդել է նրանց, իբրև բողոք, այս սառնամանիքներում դէն ձգել շորերը և տկլոր ման գալ. «Товарищъ» լրագրի մէջ Ժիլկինը խօսելով այդ մասին, ասում է.

Չորս հարիւր մարդ դէն են ձգել իրանց վրայից կեղտոտ շապիկները, դէն են ձգել վատ բարձերը, կեղտոտված ներքնակները և մերկ մարդիկ մնացել են մերկ տախտակների վրա: Իսկ նրանց հանդէպ մնացել են բայց մերկացած հոգով և աւերված խղճով:

Հին կեանքը դատապարտված է մահվան: Բայց իր գոյութեան հրաժեշտի վախճանի համար նա հաւաքում է իր բոլոր սև ույժերը: Հեռաւոր անցեալի բոլոր վարագուրված տանջանքների, դահճութեան, գնդակահարութեան և կախաղանների տեսիլները սարսափելի բազմութեամբ յարութիւն են առել նորից: Եւ սիբիրեան հեռաւոր տաժանակիր կեանքը անցել է Ուրալի վրայով և մտել ռուսական քաղաքները: Էլ ինչ բաներ մենք դատապարտված ենք տեսնելու, ինչ նոր և հին սարսափներ: Երկրի ամբողջ կեանքը, արդեօք, չէ՞ն հասցնիլ այն աստիճանին, որ նա ստիպված լինի պատառոտել իր հագի հին կարգերի վատ ու կեղտոտ շորերը:

*

Ձախակողմեան կուսակցութիւնների բլօկի հարցը Պետերբուրգում ներկայումս դեռ տատանման կէտի վրա է կանգնած: Սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը առայժմ նըպաստաւոր ոչինչ չէ խոստանում բլօկի հարցի դրական լուծման համար: Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը զիջելով քաղաքի տեղերից երկուսը ռուսաց սօցիալիզմի երկու գլխաւոր հոսանքների թեկնածուներին, ուրիշ զիջողութիւններ անել անհնարին է համարում առանց կորցնելու իր ազդեցութիւնը Դումայի տակտիկայի վրա:

Դրանից աւելի հեռու գնալ, ասում է «Рѣчь»-ը, կը նշանակէր խոստովանել իրան յաղթված առանց կռուի և այն էլ այնպիսի մի կարդինալ հարցում, որը պէտք է լուծվի ներկայ ընտրութիւնների միջոցով, այն է թէ ինչ տակտիկայի պէտք է հետևի երկրորդ Դուման: Եթէ ընտրութիւնների ժամանակ կընտրվի մի այնպիսի ցուցակ, որի մէջ երկու իրար հակառակ և անհաշտ տակտիկաներ ունեն հաւասարապէս միատեսակ թւով պատգամաւորական տեղեր, այն ժամանակ ոչ ընտրողները, ոչ էլ ընտրեալները, չեն կարող իմանալ թէ իսկապէս ի՞նչ էր ուզում ասել ընտրողը իր վօտումով: Սակայն բանակցութիւնների անաջողութիւնը ընդհանուր ցուցակ կազմելու մասին չէ ոչնչացնում հարցը մասերի վերածելու հնարաւորութիւնը և փոխադրելու համաձայնութիւնների ամբողջ գործը առանձին րայօններ, ուր ամենից աւելի է նկատվում աջակողմեան կուսակցութիւնների սպառնալիքը:

ՄԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Համաձայն «Մշակի» վերջին համարում տրված յայտարարութեան, կիրակի առաւօտ քաղաքային տան մէջ կայացաւ պ. Հ. Համբարձումեանի դասախօսութիւնը, որը գրաւել էր մօտ 70 հոգի ունկնդիրներ:

Յայտարարութեան մէջ դասախօսութիւնը կրում էր «Նորմատիւ էտիկան սօցիալիստների և անարխիստների դատաստանի առաջ» վերնագիրը, մինչդեռ, մեր կարծիքով, շատ աւելի ճիշտ կը լինէր պ. Համբարձումեանի դասախօսութիւնը անուանել՝ «Գիտական սօցիալիզմը կամ մատերիալիստական ուսմունքը նորմատիւ էտիկայի դատաստանի առաջ», որովհետև, իրապէս, պ. դասախօսը իր՝ մօտ երկու ժամ շարունակվող դասախօսութեան ընթացքում գիտական սօցիալիզմի ու մատերիալիստական թէօրիան իր դաւանած փիլիսոփայական ուղղութեան դատաստանին էր ենթարկում, քան ընդհակառակը։

Մենք միանգամայն հնարաւորութիւն չունենք և հրաժարւում ենք մեր ընթերցողներին մանրամասն ծանօթացնել պ. Համբարձումեանի դասախօսութեան հետ. դրա համար հարկ պիտի լինէր ստենոգրաֆիկ կերպով գրել այն բոլորը, ինչ որ պարոնը խօսեց ամբողջ երկու ժամվայ ընթացքում։ Ինչպէս ինքը պ. դասախօսն էլ խոստովանեց, անհնարին է նոյնպէս այդ դասախօսութիւնը կարճառօտ և ամփոփ բովանդակութեամբ ներկայացնել։

Մեզ մնում է, ասել միայն այն, որ այդ դասախօսութիւնը ամբողջապէս մի քննադատութիւն էր հասարակական երևոյթների վերաբերեալ սօցիալական գիտութիւնների տուած բացատրութիւնների մասին, քննադատութիւն, որը այդ գիտութիւնների կողմնակիցները մինչև օրս շատ ու շատ անգամներ են լսել իրանց հակառակորդների կողմից, թէև պարոն Համբարձումեանը ուզում էր հաւատացնել, թէ իր ներկայացրած տեսակէտը, որի հեղինակը նա պրոֆեսօր Լէվ Պետրաժիցկուն է համարում, մի բոլորովին նոր բան է։

Այդ տեսակէտի էութիւնը գլխաւորապէս նրանում է կայանում, որ ասում է, թէ հասարակական երևոյթները անկարելի է մատերիալիստական թէօրիայով բացատրել, որովհետև այդ թէօրիան, կամ այդ գիտութիւնը անկարող է որոշ ու պատրաստի ֆօրմուլաներ տալ այն մասին, թէ ինչ բան են իրաւունքը, բարոյականութիւնը և այլն, թէ մարդկային կեանքի մէջ մեծ դեր է կատարում անհատական հոգեբանութիւնը, իր հազար ու մի անտակ բացատրելի ու անբացատրելի կողմերով, որ նոյնպէս մեծ ազդեցութիւն ունի այդ երևոյթների վրա։

Եւ այս միտքը բացատրելու համար, պ. դասախօսը բաւականին երկար կանգ առաւ անհատական հոգեբանութեան զանազան, երբեմն շատ խրթին և ունկնդիրներից շատերի համար անհասկանալի, մետաֆիզիքական բացատրութիւնների, նրանց դէֆեկտների ու կլասիֆիկացիայի վրա, աշխատելով հոգեբանութեան տեսակէտից պատրաստի ֆօրմուլաներ գտնել իրաւունքի, բարոյականութեան, սեփականատիրութեան և այլ այդ կարգի հասարակական խնդիրների համար։

Չը նայելով, որ իր թեզիսը բացատրելու համար պ. Համբարձումեան անհագին քանակութեամբ օրինակներ բերեց հոգեբանական այլ և այլ երևոյթներից ու դրանց մասին տրված հին ու նոր փիլիսոփաների ու գիտնականների բացատրութիւններից, այնուամենայնիւ, խոստովանում ենք, ինչպէս այդ նկատեց դասախօսին և ունկնդիրներից մէկը, մենք վերջ ի վերջոյ չը կարողացանք արված դասախօսութիւնից հասկանալ, թէ ինչ բան է իսկապէս նորմատիւ էթիկան, ինչ է անհատի հոգեբանութիւնը, ինչպէս է նա վերաբերվում մեզ շրջապատող հասարակական երևոյթներին, ինչպէս է նա ազդում այդ երևոյթների վրա և ազդվում այդ երևոյթներից։

Իսկ ինչ վերաբերում է դասախօսութեան այն մասին, որը մատերիալիստական թէօրիայի քննադատութիւնն էր կազմում, պ. դասախօսը այդ թէօրիայի հետ շատ քիչ է ծանօթ, այ[illegible] ռէակցիօն թէօրիա» և ոչ էլ իրան թոյլ կը տար այդ թէօրիայի ամենաականաւոր վարդապետներից մէկի՝ Կարլ Կաուցկու մասին «մի որևէ Կաուցկի» արտայայտութիւնը, ինչպիսին նա թոյլ տուեց իրան մի քանի անգամ։ Մենք հաւատացած ենք, որ պրօֆ. Պետրաժիցկին շատ աւելի համեստ արտայայտութիւն կունենար իր քննադատած պատկառելի գիտնականների մասին, քան ունեցաւ նրա աշակերտ երիտասարդ Համբարձումեանը։

Խ.

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Յունվարի 8-ին

Նախընտրողական պայքարը Մոսկվայում նոյնպէս սկսվել է, բայց այս տարի այստեղ, ինչպէս և ամեն տեղ չէ նկատվում նախորդ տարվայ ոչ ոգևորութիւնը, ոչ եռանդը։ Մի տեսակ հիասթափութիւն, լքում, վհատութիւն է տիրում ամեն տեղ։ Ազատ ժողովներ այլևս չեն լինում. թոյլատրվում են միայն րայօնական մասնակի ժողովներ, որոնց իրաւունք ունեն մասնակցել միայն ընտրողները։ Այդ ժողովներում էլ խօսքի ազատութիւն չը կայ, որովհետև հէնց որ թաղային պրիստաւը գտնում է, որ ճառախօսը ծրագրից դուրս է գալիս, իսկոյն փակում է ժողովը։ Նախօրօք թոյլ չեն տալիս լրագիրների մէջ յայտարարել, թէ այս ինչ տեղ րայօնական ժողով է լինելու։

Մանաւանդ խիստ հալածանքներ են սկսվել կադէտների դէմ։ Չը նայելով այդ ամենին, բոլոր նշանները ցոյց են տալիս, որ ընտրութիւնների ժամանակ յաղթանակը կը տանեն կադէտները։ Սօցիալ-դեմօկրատները շատ քիչ շանս ունեն, ինչպէս և հոկտեմբրիստները և ուրիշ աջակողմեան կուսակցութիւնները։

—Այստեղ սաստիկ ցրտեր են սկսել. սառնամանիք է, մօտ 25, երբեմն նաև 30°։ Մոսկվացիները ասում են, որ վաղուց այստեղ այդպիսի ցրտեր չեն եղել։

—Յունվարի 6-ին հնարաւոր եղաւ ինձ գնալ այստեղի «գեղարուեստական թատրոնի» (Художник. театръ) ներկայացումն տեսնելու։ Ամբողջ երկու շաբաթ մեզ հնարաւորութիւն չեղաւ տոմսակ ձեռք բերել, որովհետև տոմսակները բոլոր ներկայացումների համար դեկտեմբերի 20-ից մինչև յունվարի 6-ը վերցրված էին։ Այդ թատրոնի դերասանական խումբն այժմ Ռուսաստանի ամենալաւ խումբն է համարվում և ամենալաւ ոյժերը այդ խմբի մէջ են գործում։ Յունվարի 6 ին ներկայացնում էին «Ցար Ֆեօդոր Իվանովիչ» դրաման, որի մէջ Վասիլի Շույսկի իշխանի դերը կատարում էր հայ դերասան Բուրջալօվը, որ միևնոյն ժամանակ և թատրոնի րէժիսօրն է։ Այդ երեկոյ խաղում էր և վրացի դերասան Ալէքսիէվ-Մեսխիէվը, որ կատարում էր իշխան Մստիսլավսկու դերը։

—Նպաստամատոյցի պատգամաւորութիւնը յունվարի 8-ին մեկնեց Պետերբուրգ։ Մոսկվայի հայ գաղութը խոստացաւ տալ 30—40,000 ռուբլի, առաջուց ուղարկած լինելով նաև 20,000 ռուբլի յօգուտ հայ տառապեալների Բագուի Նպաստամատոյց մասնաժողովին։ Այդպիսով, Մոսկվայի հայ գաղութը տուած կը լինի ի նպաստ հայ տառապեալների մօտ 60,000 ռուբլի։

Հ. Ա.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Պետերբուրգ, 13 յունվարի.—Սենատին տուած Բարձրագոյն ուկազով հրամայված է Դումայի անդամների ընտրութիւնները Բագուի, Գանձակի, Քութայիսի, Թիֆլիսի և Երևանի նահանգների և Բաթումի, Դաղստանի, Կարսի, Կուբանի և Տէրսկի շրջանների նահանգական և շրջանային ընտրողական ժողովներում, ինչպէս և Թիֆլիս և Բագու քաղաքների քաղաքային ընտրողական ժողովներում կատարել 1907 թ-ի փետրվարի 6-ին։ Ուկազը վաւերացրել է մինիստրների խորհրդի նախագահը։

(«Հ. Գ.»)

Յունվարի 13-ին վերջացել են Թիֆլիս քաղաքի ընտրողների ցուցակները կազմելու համար գործադրվող աշխատանքները։ Այդ ցուցակները մինչև յունվարի 15-ը Թիֆլիսի քաղաքային վարչութեան կից գտնվող ստատիստիքական բիւրօի միջոցով պէտք է ուղարկվեն բոլոր ոստիկանատները, բացառութեամբ 5-րդ և 10-ի։

Թիֆլիսի ընտրութիւնները կայանալու են հետևեալ շինութիւնների մէջ՝ 1-ին թաղամասում—քաղաքային մսի խանութներում (Վէրա). 2-րդ թաղամասում—Զուբալովի աղքատանոցում, 3 րդ թաղամասում — Ալէքսանդրեան այգում գտնվող Պուշկինեան գրադարանում, 4-րդում—քաղաքային դումայի դահլիճում, 5-րդում—քաղային Արհեստաւորաց դպրոցում, 6-րդում — քաղաքային Պուշկինեան տարրական դպրոցում, 7-րդում—Վարշամեան (Արաքսեանի) թատրոնում, 8-րդում—Առևտրական դպրոցում, 9-րդում—«Կրուժօկի» ամառային շինութեան մէջ և 10 րդում—Կիրօչնի փողոցում, Զուբալովի անունով հիմնված ժողովրդական տան մէջ։

Քաղաքային վարչութիւնը, Պետական Դումայի ընտրութիւնների նահանգական մասնաժողովից տեղեկութիւն է ստացել, որ 923 բողոքագրներից բաւարարութիւն է տուած միայն 15-ին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Եթէ անցեալ տարի Անդրկասպեան երկրին վիճակված չէր մասնակցութիւն ունենալ երկրի քաղաքական կեանքում, այժմ նա մխիթարվել կարող է նրանով, որ այս տարի այն [illegible] միւս տեղերի համեմատութեամբ ամենից առաջ։ Այդ բացատրվում է նրանով, որ անցեալ տարվայ կազմված ցուցակները և գործերը բաւականաչափ նպաստեցին այս տարվայ ընտրութիւնների առաջանալուն։

Ընտրութիւնները, ինչպէս հաղորդում է «Вѣкъ» ը, արդէն տեղի են ունեցել Ասխաբադում, Մերվում և Կրասնօվօդսկում։ Բոլոր այդ քաղաքներում, չը նայած զանազան տեսակ բացարձակ ճնշումներին, վարչութեան հալածանքներին դէպի առաջադէմ կուսակցութիւնները և նրա ցոյց տուած զօրեղ հովանաւորութիւնը սև-հարիւրակային պրօպագանդին,—ընդդիմադիր-առաջադէմ տարրերը փառաւոր յաղթութիւն տարան։

Ասխաբադում 22 ընտրողներից 21-ը պատկանում են ձախակողմեան կուսակցութիւններին, որոնց 1790 ընդհանուր ձայներից ստացել են 1605—1435 ձայն։ Նրանք բաժանվում են այսպէս. կադետներ՝ 9, սօց.-դեմօկր.՝ 6, Դաշնակցականներ՝ 2, առաջադիմականներ՝ 4։

Կրասնօվօդսկում անհագին մեծամասնութեամբ անցել են 4 սօց.-դեմօկրատներ և 2 առաջադիմականներ։

Մերվում—կադետներ՝ 4, սօց.-դեմօկ.՝ 2, Դաշնակցականներ՝ 2 և առաջադիմական՝ 1։

—Պետերբուրգի գաւառի ազնուականութեան պարագլուխ Շուբին-Պօզդնեևը, որպէս նահանգական ընտրողական մասնաժողովի անդամ, հարց է բարձրացրել այն մասին, որ Պետական Դումայի ընտրութիւնների վերաբերեալ ներքին գործոց մինիստրութեան հրատարակած հրահանգները թեր և դէմ կարծիքներ են առաջացրել գաւառական մասնաժողովում, որտեղ անդամներից մի քանիսը գտել են, որ այդ հրահանգները հակասում են Պետական Դումայի ընտրութիւնների վերաբերեալ հիմնական օրէնքներին և կառավարիչ սենատի նրանց վերաբերեալ տուած բացատրութիւններին։ Պ. Շուբին-Պօզդնեևի կարծիքով հէնց այդ տեսակէտից էլ անհրաժեշտ է քննութեան ենթարկել այդ հրահանգները։ Նահանգական մասնաժողովը, հիմնվելով այն բանի վրա, որ այդ հրահանգները արդէն հրատարակված են «Օրէնքների ժողովածուի» և «Կառավարչական կարգադրութիւնների» մէջ, հետևապէս ունեցել է կառավարիչ սենատի վաւերացումը, որը ըստ երևոյթին չէ գտել նրանց մէջ հակասութիւն ընտրութիւնների վերաբերեալ օրէնքի մտքին՝ վճռել է թողնել անհետևանք Շուբին-Պօզդնեևի յայտարարութիւնը։ «Страна»։

—Պետերբուրգի նահանգի Պետական Դումայի ընտրողական նահանգական մասնաժողովը յունվարի 4-ին նիստ է ունեցել, որտեղ քննել է մինչև 200 խնդիրներ։ Այդ գանգատների թւում եղել է, ի միջի այլոց, և Պ. Ն. Միլիւկօվի գանգատը, որին դուրս էին գցել ընտրողական ցուցակներից։ Միլիւկօվը փաստաթղթերով հաստատել է, որ ինքը ընտրողական իրաւունք ունի և նորից մտցրել է նրան Պետերբուրգի քաղաքային ընտրողների ցուցակի մէջ։ «Пет. Листокъ»։

ԹՈՒՐՔԻԿ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոր-Նախիջևան, դեկտեմբերի 30-ին

Հասարակական կեանքը Նախիջևանում ամբողջապէս կենտրոնացած է դժբախտաբար միմիայն կլուբի կանաչ սեղանների և լօտօի շուրջը, նոյնը և ընտանիքներում. և ամեն մի հասարակական երևոյթ որ պիտի հասարակութեան ցնցէր, անցնում է առանց ուշադրութեան։ Անկասկած, գուցէ մի ուրիշ աւելի մեծ վաճառականական կենտրոնում «մեղմացուցիչ դէպք յանցանաց» կարելի լինէր գտնել, բայց Նախիջևանի համար ոչ մի արդարացուցիչ բան չէ կարող լինել, քանի որ մարդիկ միշտ ժամանակ ունէին հետաքրքրվել և ժամանակ նուիրել այս կամ այն երևոյթներին և ըստ արժանւոյն քննել և վճռել։

Ահա այդ մեռցնող անտարբերութեան մի քանի օրինակները։

Դերասան Պետրոսեանը, որ դեռ երկար տարիներ պէտք էր մեր խղճուկ հայ բեմի նեցուկը լինէր, շնորհիւ տեղիս հասարակութեան անտարբերութեան, հարկաւոր ուշադրութեան և խնամքի չարժանացաւ. մենք կարծում ենք որ նրան պէտք էր անպատճառ ուղարկել Մոսկվա, գուցէ այնտեղ կարելի լինէր մի կերպ բժշկել խեղճին... Հասարակական գործիչի հոգսը պէտք է հասարակութիւնը քաշէ, բայց այստեղի հասարակութիւնը չը գիտէր թէ ով է Պետրոսեանը, երբ վերջինս մերձ ի մահ ժամէ ժամ մահի էր սպասում տանջվելով իր մանր վէրքերից։ Մեռնելուց յետոյ ինչ ասել կուզէ ամէն ջանք գործ դրին յուղարկաւորութեան հանդէսը շուքով կատարել. կային թէ պսակներ, թէ դամբանական խօսողներ, թէ արցունքներ... Վաղուց է յայտնի որ մենք հայերս թաղել գիտենք...

Պետրոսեանի մահից յետոյ անցաւ մի քանի օր, սրբազան Սեդրակեանի մահվան բօթը արցունքով շաղախեց բոլոր հայաբնակ անկիւնները, ամեն կողմից հաղորդաւոր ցաւակցական հեռագիրներ, պատգամաւորներ, պսակներ, նրա անունով նուիրատւութիւններ և այլն և այլն։ Իսկ Նախիջևանից... Անցեալ կիրակի պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարեցին և այդ ժամանակ վարդապետ Մուշէն յանպատրաստից մի քանի կցկտուր խօսք ասեց ամենաարժանաւոր հովուի հասցէին, խօսքեր, որոնք միայն գուցէ արժանի լինէին մի աննշան տեղացի քաղաքացիի հասցէին, բայց ոչ սրբազան Սեդրակեանի...

Այդ երեկոյ թատրոնում ամեն ինչ կար, բայց ոչինչ հայկական։ 1) Երկու թարգմանական անալի վօդեվիլներ, որոնց մեր տեղիս դերասանները ըստ կարելւոյն փչացրին միմիանց բերանից խօսքեր խլելով և ծայրահեղ շարժի դիմելով։ 2) Զաւեշտ, կամ ճիշտն ասած մի աջաբսանդալ, որտեղ դերասանուհի Ժիլինսկին երգում էր գնչուական ռոմանսներ, որոնք թէև աջող էին, բայց անպատշաճ հայկական երեկոյթի համար։ Երգիչ Անտօնեանի երգում էր իտալական ռոմանսներ և օպերայից կտորներ իտալերէն։ Միայն Չուխաճեանը այնքան խելացի գտնվեց, որ իր նուագած համարներից յետոյ պարտք համարեց bis ին գոնէ մի հայկական երգ նուագել (օրօրոցի երգը)։ [illegible] Շագինոֆեր) նուագեցին մի քանի թեթև անճաշակ և վերին աստիճանի անաջող երաժշտական համարներ։ Միակ հայկականը այդ քառաձայն երկսեռ խմբի երգած երգերն էին, որից առաջինը Մարդասիրական ընկերութեան յօբելեանի առիթով գրած Հայրապետ Ղուկասեանի «Որ վառեցեր»-ն էր, ձայնագրած հանգուցեալ Կարա-Մուրզայից, որը շատ անաջող էր պատրաստված... Դեռ ևս մեր ականջներում հնչում են այն փառաւոր և յաղթական ուժեղ ակկորդները, որ առաջին անգամ լսեցինք այդ մարշը յօբելեանին, ղեկավարութեամբ Կարա-Մուրզայի, որը երգում էր մօտ 200 հոգուց բաղկացած մի խումբ. իսկ այսօր Նախիջևանի հայկական երեկոյթում այնքան աղաւաղած է և զուրկ [illegible] երաժշտական ճաշակից։ Մարշի trio-ն չը գիտենք ինչու անջատված էր նախերգանքից, որ հակառակ է տարրական երաժշտական անհասկացողութեան. միւս երգած համարները համեմատաբար լաւ էին։

Բացի խմբական երգը՝ դերասան Ալիխանեանը կարդաց մի քանի ոտանաւորներ, որոնք իբրև դերասանի արտասանած թոյլ էին. պարոնը պիտի գիտենայ, որ բեմի վրա ոտանաւոր արտասանելը և դերակատարութիւնը միևնոյնը բանը չէ, նա իզուր էր դէպի երկինք թռչում. այդ դեկլամատիկական բեմբասացութեան չէ պատկանում։ Պ. Զուբարը արտասանեց մի քանի կօմիկ կուպլէտներ «Օրուայ չարիք», որոնք հանդիսականներին զուարճութիւն պատճառեցին։ Մեր կարծիքով այդպիսի կուպլէտները պիտի ընդհանուր հասարակական նշանակութիւն ունենան, հակառակ դէպքում նրանց բեմից արտասանելը աւելի գոյն է ստանում (կուպլէտներ բէյէնդերի հասցէին)։ Չը մոռանանք յիշել բեմի վրա պարած ասիական երկու պար և միջնարարներում երաժիշտների նուագած կէկուօք մաչիս և և այլն... (մինչ դեռ նոյն երաժիշտները նուագում են և հայկական եղանակներ)։ Մեր կարծիքով պ. ղեկավարները չարաչար սխալվում են երբ մի որևէ բարեգործական նպատակով տրված երեկոյթի ծրագիրը բոլորովին անուան չէ համապատասխանում... Եթէ այդ երեկոյ թատրոնում մի քանի այլազգի հանդիսատեսներ լինէին, չը գիտենք ինչ գաղափար պիտի կազմէին Նախիջևանի «հայոց երեկոյթից»...

Տեղիս սեմինարիայի աշակերտները նոյնպէս վարակվեցին մօդնի ցաւով և երևում է այդ ցաւը արդէն անբուժելի կը լինի և նրանց գերեզման կիջեցնէ։ Այդ ցաւը նրանց մտաւոր ընդունակութիւնների վրա այնպէս է ազդել, որ նրանք հրաժարվում են դասընթացքը շարունակել մինչև որ հոգաբարձութիւնը նրանց հիւանդոտ և անարդար վճիռը չը կատարէ, իսկ այդ վճիռը համարեա թէ կայանում է նրանում, որ դաստիարակները ոչ թէ հրաւիրված են իրանց այդ մանուկներին դաստիարակելու, այլ ընդհակառակը այդ մանուկները պէտք է դաստիարակներին բան սովորեցնեն...

Իսկ որովհետև այդ բանը մանուկների խելքից դուրս է, ուստի հասկանալի է այդ մանուկների փոքրիկ ստուերների տակ մի թզուկ է կանգնած, որ նրանց իր կարճ խելքով զանազան դատողութիւններ է թելադրում... Խեղճ մանուկներ, որ այդպիսի թզուկների զոհ էք գնում։

Անցեալ օրվայ ծնողների և հոգաբարձուների ժողովում, ուր մենք անկարող եղանք ներկայ լինել, ասում են, իբրև պ. Չալխուշեանը, որը պիտի պաշտպանէր սեմինարիստներին, ժողովում լսելով նրանց պահանջը և իրողութիւնը հրաժարվում է պաշտպանի պաշտօնից... Մենք դեռ կը վերադառնանք այս հարցին, իսկ առ այժմ մեր սիրտը ճմլվում է այդ տխուր երևոյթից. մանաւանդ նրա հետևանքներից։

Դրսեցի

ՆՈՒԽԻՆ ԵՒ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Նուխին թէև կուլտուրական տեսակէտից համեմատած Անդրկովկասի ուրիշ քաղաքների հետ առաջադիմում է շատ դանդաղ շաւղով, բայց և այնպէս ուշադրութեան արժանի է այդ քաղաքի ազգաբնակութեան բռնած դիրքը ու կատարած դերը հայ-թուրքական ընդհարումների ժամանակ։

Սարսափելի կոտորածը ու դժբաղդ դէպքերը, որոնք կատարվեցին Անդրկովկասի զանազան տեղերում, արձագանք չը գտան Նուխում, որտեղ, շնորհիւ հայերի և թուրքերի մէջ վաղուց գոյութիւն ունեցող օրինակելի լաւ յարաբերութեանը, չէ պատահել սկզբից մինչև վերջը որևէ մի ընդհարում կամ կռուած։

Ասում են, որ օրինակը աւելի ազդում է մարդկանց վրա քան թէ գեղեցիկ խրատները։ Իսկապէս, ով է իմանում եթէ Նուխում չը լինէր երկու ազգաբնակութիւնների մէջ օրինակելի անկեղծ բարեկամական յարաբերութիւնը, այն ժամանակ գուցէ և չօգնէին խելացի մարդկանց խրատները այս ու այն պատահական դիրք բռնողներին։ Միւս գլխաւոր պատճառը, որի շնորհիւ չառաջացաւ Նուխում ընդհարում, այն է, որ թուրքերից մի քանի արժանաւոր անձնաւորութիւններ գլուխ ունենալով տեղացի թուրք Աֆֆանդին, քաջութիւն ունեցան շատ լաւ խրատներ արտասանել ապստամբական դիրք բռնող չիա ազգաբնակութեան մի որոշ մասի դէմ։ Արժանաւոր թուրք անձնաւորութիւնները, որոնք իրանց խելացի խրատներով աչքի էին ընկնում Նուխում, հետևեալներն էին. Գամբար Հաջի Մահմմադ-օղլի, Խնջալ-օղլի, Աղա Մուհտարամ, եղբայրք Սալամ և Իւնուս Մահմադ-օղլիներ, Կուրբան Սօյուն-օղլի և մի քանի ուրիշները։

Անցեալ տարի սեպտեմբեր ամսվայ «Մշակ» լրագրի համարներից մէկում այն ժամանակվայ Նուխում տիրող վերջին տեղեկութիւնների վերաբերեալ ի միջի այլոց յիշված էր.

«Սիւնի վաճառականները մեծ շահ ունեն հայերից, կապված են առևտրական յարաբերութիւններով և իրանց համար դժբաղդութիւն են համարում հայերի հետ թշնաման[illegible]ու. Տողերիս գրողը վստահանում է յայտնել, որ Նուխեցի թուրքերի արած բարութիւնը կամ լաւ վարմունքը վերաբերեալ հայերին՝ հայ-թուրքական ընդհարման ժամանակ չէ ծագում առևտրական հաշիւներից, այլ միայն առաքինութեան գաղափարից։ Այն ժամանակ, երբ Անդրկովկասի զանազան տեղերում «Շէյթանի» ազդեցութեան տակ հայերը և թուրքերը անխիղճ կռիւ էին մղում միմեանց դէմ և տեղացի թուրքերից շատերը խորշելով այդպիսի անախորժելի ու ատելի երևոյթից, յաճախ ասում էին. «Մենք նուխեցի թուրքերս չը պէտք է մոռանանք հայերի հետ կերած աղն ու հացը և պարտաւոր ենք պահպանել որքան կարելի է սովորական մեր լաւ յարաբերութիւնը»։

Երբ Կովկասում հայ-թուրքական ընդհարումները հասել էին իրանց գագաթնակէտին, ինչպէս յայտնի է, Թուրքերի Շէյխ-Իւլ-Իսլամը զայրացած այդ հանգամանքից իր գեղեցիկ քարոզներում յիշեց հետևեալ իմաստալի խօսքերը «Նահլաթ շէյթանին, որ երկու բարեկամ և հարևան ազգերի մէջ ցանեց չարութեան սերմերը»։ Շատ ափսոս, որ միայն այժմ և ոչ աւելի վաղ իր ժամանակին հասկացվեց այդ իմաստալի խօսքերի էութիւնը... Սակայն «լաւ է ուշ քան երբէք»։ Այժմ երկու կողմն էլ հաշտվել են՝ ինչ ասել կուզէ՝ որ այդ էլ ցանկալի երևոյթ է և գովելի քայլ է։

Նուխու հայերը թէ թուրքերը կատարեցին իրանց եղբայրական պարտականութիւնը։

Նուխեցիների համար սկզբից մինչև վերջը ն[illegible]ղթի արժանացաւ «շէյթանը»։

Լ. Եղոյեան

Բագու, 8 յունվարի

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

(Նամակ Գերմանիայից)

Այս տարի Բեռլինի հայ և ռուս ուսանողութիւնը միացած ոյժերով տուեց իր սովորական երեկոյթը «Gesellschaft Der Freude»։

Դահլիճը գրաւել էր անհագին բազմութիւն։ Համերգին մասնակցում էին մայրաքաղաքի յայտնի արտիստական ոյժեր—ինչպէս Վալդմար-Մայեր (կլարնէտ)։ Իդայ Օրլօվա (Լեսինգ թատրոնի դերասանուհի)։ Սիրողների երկսեռ քառաձայն խումբը, ղեկավարութեամբ Ա. Մամաջանի, երգեց մեծ աջողութեամբ մի քանի հայկական ժողովրդական երգեր։ Ժողովրդի բուռն ծափահարութեամբ, խումբը երկար կրկնեց երգերը մի քանի անգամ։ Համերգից յետոյ կայացան կենդանի պատկերներ, որ հետաքրքիր էին իրանց բովանդակութեամբ։ Ի վերջոյ մեծ աջողութիւն ունեցան հայկական և ռուսական պարերը, որոնք տևեցին մինչև առաւօտեան ժամի 7-ը։ Ժողովուրդը գոհ սրտով հեռացաւ դահլիճից։

***

ԱՆՀԱՏՆԵՐԸ ՉԵ՞Ն ԺՈՂՈՎՐԴԻՆ ՓՐԿՈՂԸ...

Տխուր խորհրդածութեան առիթ է տալիս «Մշակ»-ի № 1-ում Շուշուց հաղորդված լուրը այնտեղի ժողովրդի ցոյց տուած վերաբերմունքի մասին դէպի իր ինքնապաշտպանութեան կարևոր խնդիրը։

Մի ժողովուրդ, որ խօսելու շրջանում ինքն ամենից առաջ հրապարակով գնում էր ինքնապաշտպանութեան գործը մինչև այժմ ղեկավարող կազմակերպութեան իրաւասութիւնից հանելու և իր ձեռքում կենտրոնացնելու հարցը, այժմ, երբ հերթը գալիս է խնդրի գործնական լուծման անցնելու, ցոյց է տալիս այնպիսի խայտառակ լքման ու յուսահատութեան նշաններ, որ կարծես ակամայ հաստատում է նրա մասին եղած այն կարծիքը, թէ նա, չը նայած իր երբեմն ցոյց տուած հերոսական անձնազոհութիւններին, դեռ երկար ժամանակ կարիք ունի դրսի ոյժի ղեկավարութեան, խնամակալութեան...

Ամբողջ հարցը պտտում է մի անձնաւորութեան շուրջը, որը մօտիկ անցեալում ցոյց տուած իր գնահատելի ծառայութեամբ արժանացել է ժողովրդի համակրանքին և ահա այժմ, երբ նա հրաժարվում է մնալ ժողովրդական ինքնապաշտպանութեան կազմի մէջ, այդ հանգամանքից գլուխը կորցրած՝ ժողովուրդը չէ իմանում ինչ անէ...

Ողորմելի ժողովուրդ, որ իր բաղդը, իր գոյութեան խնդիրը անբաժան կապում է սոսկ անձնաւորութիւնների հետ, դնում է նրանց ոտքի տակ...

Առանց ճանաչելու այդ անձնաւորութեանը և յարգանքով վերաբերվելով դէպի նրա անձնական արժանիքներին ու կատարած ծառայութիւնները, հարկաւոր ենք համարում մեր խօսքն ուղղել այդ ժողովրդին և ասել, որ հանճարեղ անձնաւորութիւնները չեն փրկում ազգերին կամ հասարակութիւններին որևէ վտանգից, այլ սրանք իրանք են իրանց փրկողը, թէև ղեկավարները միշտ էլ լինեն անհատներ։ Մի հասարակութիւն, որ ինքն իրան չը պաշտպանէ, անհատները երբէք չեն կարող այդ անել... Անհատների առաւելութիւնը նրանում է միայն կայանում, որ նրանք շնորհիւ իրանց տաղանդի, կրիտիքական րօպէններում իսկոյն բարձրանում են հասարակութեան ընդհանուր մակերևոյթից, դառնում ղեկավարներ, իսկ այնուհետև ամեն ինչ իր ուսերի վրա տանում է ինքը ժողովուրդը։

Նոյնիսկ այդպիսի անհատների բացակայութեան դէպքում ժողովուրդը իր օրհասական մօմենտին ծանր երկունքի մէջ ծնում է իր հերոսներին, առաջ մղում նրանց, վեր բարձրացնում իր ուսերին, իր արեան գնով ձեռք բերած յաղթանակի դափնիներով պսակում նրանց, փառաւորում, աստուածացնում... Եւ այդպէս էլ նրանք մնում են բարձր, քանի որ պահպանում է նրանց ժողովուրդը. իսկ հէնց որ հեռանում է նրանցից այդ նեցուկը նրանք անխուսափելի կերպով ընկնում են, կործանվում և ուրիշ կերպ էլ չէ կարող լինել, քանի որ ժողովուրդն է նրանց միակ պատուանդանը, հիմքը, արմատը։

Եթէ մի ժողովուրդ ծնել է մի հերոսի, պէտք է յուսալ, որ նա ծանր րօպէում ընդունակ կը լինի իր միջից արտադրելու այդպիսի ուրիշները ևս, և գուցէ շատերը, այնպէս, որ նա այժմ չը պէտք է յուսահատվի մէկի հրաժարականի պատճառով. իսկ եթէ այդ ժողովուրդը զգում է արդէն իրան այդքան ամուլ, այն ժամանակ սոսկ անհատները, որքան էլ նրանք հանճարեղ լինեն, չեն կարող փրկել այդպիսի ժողովրդին անկումից...

Իր յոյսը առանձին անհատների վրա դրած ժողովուրդը կորցնում է իր գոյութեան իրաւունքը, քանի որ անհատները, որոնց պաշտպանութեան ապաւինում է նա, կարող են ամեն րօպէ ասպարիզից վերանալ, թէկուզ հէնց բնական մահվան պատճառով. միթէ ուրեմն ժողովուրդն էլ այդ դէպքում պէտք է իրան կենդանի թաղէ նրանց դիակների հետ...

Վայ այն ժողովրդին, որն իր յոյսը դնում է ոչ թէ իր սեփական հաւաքական ոյժերի վրա, այլ առանձին անհատների. դրանով նա ինքն իր ձեռքով նախօրօք փորում է իր գերեզմանը...

Ոչ ամենահանճարեղ անհատները և ոչ էլ ամենակատարեալ կազմակերպութիւնները կարող են միշտ պաշտպանել ու փրկել մի ժողովուրդ վտանգներից ու անկումից. ինքնապաշտպանութեան, կարող, ընդունակ պիտի լինի ինքը ժողովուրդը և նա էլ կրիտիքական մօմենտում կարտադրի իր միջից նոր ու նոր հերոսներ. անհրաժեշտ է միայն մի բան, որ այդ ժողովուրդը ինքը յոյս ու հաւատ տածէ դէպի իր սեփական ոյժերը։

Ժողովուրդը ինքն է իր ամենամեծ պաշտպանը, իր փրկիչը...

Լ. Մարկոսեան

ՏՕՆԵՐԸ ԱԽԱԼՑԽԱՅՈՒՄ

I

Մեզանում տօները սկսված կարելի է համարել դեկտեմբերի 24-ից, որովհետև ռուսները ու հայ կաթոլիկները դեկտեմբերի 25-ին են տօնում Ծնունդը։ Տօների վերջը հասնում է մինչև յունվարի 10-ը, երբ հազիւ կարելի կը լինի անցած համարել շնորհաւորութիւնների, տնօրհնէքների, հարբեցողութիւնների, կռիւների մասամբ փոթորկոտ, մասամբ տխուր ու ձանձրալի շրջանը։

Տօները իրանց որոշ հրապոյրներն ունեն. առանձին պահանջ պէտք է լինի տօն ունենալը. մարդիկ պէտք է զգան նրա կարիքը, սպասեն նրա գալուն անհամբեր. բայց երբ մի տեղ, ուր առանց այն էլ ծուլութիւն, անշարժութիւն է տիրում սովորական օրերում, ուր ինչպէս սովորական ձևով ասում ենք՝ կեանքը մեռած է, ահա այդպիսի տեղերում տօները պիտի քիչ թէ շատ կեանքը փոխեն, այսպէս թէ այնպէս թարմացնեն նրան։ Մի խօսքով տօնական տրամադրութիւն պէտք է իշխի ամեն տեղ՝ թէ փողոցում և թէ տներում ու հասարակական հիմնարկութիւններում մանաւանդ։

Այդպէս չէ մեզանում։ Մենք անց ենք կացնում տօները բաւական անհամ. խօսքս չի վերաբերում ընտանեկան նեղ շրջապատերին. դրանք ոչ մի նշանակութիւն չունեն ընդհանրութեան համար. ես կամենում եմ ասել, որ ժողովուրդը, հասարակութիւնը չը պէտք է բաւականանայ զանազան ժամանակի շնորհաւորութիւններով, կամ թէ կաղքով ման գալով. այլ այդ տօներին, երբ ժողովուրդը առժամանակ դէն է դցում քրտնալից աշխատանքը, այդ տօներին նա պէտք է ունենայ լայն շրջան, զվարճանալու, խօսելու, արտայայտվելու աւելի ընդարձակ միջավայր, քան չորս պատերն են։

Եւ այդ կը լինի միայն ներկայացումներով—էժանագին թէ այլ բարեգործական նպատակով—այդ միևնոյն է. Ներկայացումներից յետոյ գալիս են հանդէսներ, տօնածառեր և ուրիշ նոյնանման ձեռնարկութիւններ։

Սրանք ներկայ ժամանակում հանդիսանում են անհրաժեշտ գործունէութիւն հասարակական գործիչների համար։

Կար ժամանակ, երբ այսպիսի տօներին ժողովուրդը բաւականանում էր լոկ ժամ գնալով, տիրացուների «կլկլան» ձայնը լսելով, ժամերգութեան ձոխ ու փառաւոր արարողութիւնները տեսնելով։ Այս բաները նրա համար բաւարար և գոհացնող էին։ Այդ «բարի» ժամանակները, «խէր ու բարաքաթի» տարիները անցել են անդարձ. նրանց միայն նախորդ սերունդի բեկորներն են ափսոսանքով յիշում։ Այնուամենայնիւ մեր նախորդները, կարծում եմ, մեզանից շատ ու շատ աւելի գոհ սրտով էին վերջացնում տօների շարքը—նրանք իրանց հոգեկան մտաւոր պահանջներին բաւարարութիւն էին տալիս ժամում խնկի ծուխը ծծելով, տէրտէրին աջահամբոյր տալով, ջերմեռանդութեամբ խաչ ու աւետարան համբուրելով։ Այս նրանց դարի տուրքն էր, այս էր պահանջվում նրանցից։

Ուրիշ է մեր ժամանակը, ուրիշ են մեր դարի պահանջները։ Եւ հէնց այդ պահանջներին մենք, մեր այս փոքրիկ քաղաքում, չը կարողացանք գոհացում տալ։ Ահա թէ ինչը չեղաւ մեզանում։

Խօսենք մեր անցրած տօների մասին հերթով։

Հայ կաթոլիկ համայնքը ինքնուրոյն ոչինչ չունէր. ճիշտ է, նա եկեղեցական տօներից մի քանիսը առանձին է տօնում, բայց նրա հասարակական կեանքը կապված է մեզ հետ. դպրոցների և ներկայացումների միջոցով, թէև այդ չնչին չափով։ Դրանից դուրս նրանք առանձին ունեն իրանց եկեղեցական-համայնական գործերը, որոնք բոլորովին անմխիթար վիճակի մէջ են գտնվում շնորհիւ դարձեալ Տէր-Աբրահամեան վարդապետի։ Այս մարդու պատճառով կաթոլիկ համայնքը տօներին զրկվեց կանոնաւոր ժամասացութիւնից։ Մի քանի ժամանակից ի վեր հայոց եկեղեցու խմբապետը հայ-կաթոլիկների խնդիրքով նրանց համար առանձին խումբ էր պատրաստել, որը երգում էր նրանցից մէկի ղեկավարութեամբ. այս գեղեցիկ գործը, սակայն, դուր չի գալիս Հռոմի հարազատ զաւակ վարդապետին և նա արգելում է քառաձայն խմբի երգեցողութիւնը լոկ նրա համար, որ անձնական հաշիւ է ունենում խումբը ղեկավարողի հետ։ Հետևանքը—այն, որ ճրագալոյցի երեկոյին ամբողջ կաթոլիկ համայնքը ստիպված էր մի ինչ որ գիւղից եկած տիրացուի աններդաշնակ պատարագը լսել. այդպէս և աւելի վատ միւս պատարագի օրերում։ Առհասարակ կաթոլիկ համայնքի համար եկեղեցին և նրա արարողութիւնները մեծ նշանակութիւն ունեն. նրանք դեռ պինդ կապերով կապված են եկեղեցուն. այս դէպքում գոնէ նրանից մի մխիթարական բան ստանան. գոնէ կանոնաւոր երգեցողութիւն լսեն եկեղեցում։ Միթէ վարդապետը այս պարզ բանը չի հասկանում։

Անցնենք մեր բուն հայկական կեանքին։

Չենք խօսի եկեղեցու, կամ աւելի ճիշտը մեր տօների եկեղեցու հետ կապված կողմի մասին. ջերմեռանդները գնում են ժամ, լսում են երգեցողութիւնը և գոհ սրտով վերադառնում։ Դրանից դուրս նրանց մնում է բարեկամների մօտ գնալ, խմել, ուտել, խօսել և ուրախանալ։ Այս սահմաններում է անցկացնում տօները մեր հասարակութեան մի մասը։

Միւս աւելի խոշոր մասը չի գոհանում այդ սահմանափակ պահանջով. նրան հարկաւոր են ուրիշ տեսակի բաներ։ Եթէ մինչև անգամ այդ խոշոր մասը—երիտասարդ սերունդը—կաղքով ման գալուց ու խմելուց դատ ուրիշ պահանջ—տօնական պահանջ չը զգայ էլ, մեր ինտելիգենտ մասը պարտական է տալ նրանց նոր բաներ, հետզհետէ սովորեցնելով նոր պահանջներ։

Չարժէ խօսել մեր բազմանդամ ուսուցչական խմբի մասին, քանի որ նա մինչև այսօր ոչ մի քայլ չէ արել այդ ուղղութեամբ. իբրև հասարակական գործիչ, մեր ուսուցիչները ծոյլ ու անփոյթ եղան մինչև այսօր. նրանք փառաւորապէս պառակտված խմբակներ էին կազմել ու իրար բամբասելով էին զբաղվել, մինչև որ փառք Ալլահին, տօները եկան հիւանդութիւնները արգելեցին և խանգարեցին նրանց հասարակական գործունէութիւնը (?!!)։ Այս չորս ամսվայ ընթացքում նրանք համախմբված մի մեծ զէրօ են առաջ բերել՝ իրանց պաշտօնից դուրս... Թէև առանց այդ էլ դեռ սրանց մանկավարժական գործունէութիւնը, չը գիտենք քանի պլիւս է։ Բայց այդ մասին յետոյ... Ասենք որ ուսուցչական խումբը՝ ոչ առանձին, այլ իբրև մի միութիւն՝ հաւասար է 3 թւանշանի։

Այդպէս ուրեմն, այն ինչ շատ տեղերում ուսուցիչները դեռ մինչև տօները ցոյց են տալիս բաւական օգտակար հասարակական գործունէութիւն, մեզանում նրանք ամբողջապէս կլանվել են դպրոցական և... ուրիշ գործերով, երևի։ Իսկ տօներին ցրիւ եկան. ախար դէ 16 օր արձակուրդը քիչ ժամանակ չէ։ Անպիտան տարափոխիկ հիւանդութիւնը չը լինէր մէկ է...։

Ամբողջովին անպէտք ու անհամ կանցնէին տօները մեզանում, եթէ չը լինէին քաղաքային ժողովարանի ներկայացումները և երկրորդ ժողովրդական էժանագին ներկայացումը։ Այս երկուսի մասին արժէ աւելի կանգ առնել, իբրև քիչ ու շատ մխիթարական երևոյթի՝ մեր տաղտկալի կեանքում։

Գալուստ

2 յունվարի

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Օլթի, յունվարի 1-ին

«Մշակ» թերթիդ 1906 թ. № 283 համարում Օլթիից պ. Գ. Դարբինեանի գրած նամակը սուտ եւ զրպարտութիւն է։

Խնդրում էի և շատ ցանկալի էր որ մեր, պ. Դարբինեանի ակնարկած, ժողովին մասնակցող անդամները հրապարակ գային ճշմարտութիւնը պարզելու, ուր կային ամէն ազգի ներկայացուցիչներ՝ ռուս, յոյն, վրացի, հայ-լուս. և հռոմ. պարսիկ, թուրք. և չեմ կարծում որ այնտեղ կողմնապահութիւն լինէր. ես վստահ եմ։

Իսկ նրա կրքոտ խօսքերին պատասխանել աւելորդ եմ գտնում. թողնում եմ այդ հասարակաց դատաստանին։

Վարդան քահանայ Սառաքեանց.

Թիֆլիս, 15 յունվարի

Թոյլ տուէք «Մշակ»-ի միջոցով յայտնել հետեւեալը.

Ես խոստացել էի դասախօսութիւնիցս ստացուած մուտքի 50%-ը յատկացնել հայոց թեմական դպրոցների չքաւոր աշակերտների օգտին։

Դասախօսութիւնս կայացաւ և մուտք առեց 13 րուբլի, որից 5 րուբլին գնաց ծախքերի համար, իսկ մնացեալ գումարի 50%-ը (4 ր.) սրանով յանձնում եմ «Մշակ» լրագրի խմբագրութեանը գործադրելու վերոյիշեալ նպատակին։

Ընդունեցէք յարգանքս։

Հ. Համբարձումեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փոխարքան հեռագրով ներքին գործերի մինիստրի առաջ միջնորդութիւն է յարուցել՝ 420277 րուբլի կառավարական փոխատւութիւն բաց թողնել հայ-թուրքական ընդհարումներից վնասուած Զանգեզուրի գաւառի 18, Կարեագինսկի գաւառի 8, Ջիվանշիրի գաւառի 26 և Շուշու գաւառի 18 գիւղերին մատակարարական օգնութիւն և սերմացու հասցնելու համար։ Խնդրած գումարը մտադրվում է բաժանել այսպէս. Զանգեզուրին տրվելու է 70018 րուբլի, Կարեագինի գաւառին 29398 րուբլի, Ջիվանշիրին—198791 ր. և Շուշու գաւառին 122070 րուբլի»։

Աղէտեալների օգտին ստացանք. 1, Պետրովսկից — Ծննդեան երեկոյեան աւետիս ման գալուց Ս. Վէյնիկեանի և միւսների միջոցով 332 ր. 30 կ., 2, Գրիգոր քահանայ Տէր-Յակոբեանի մահվան յիշատակին Յ. Մաքսուտ և Տ. Եփրոս Նշանեաններից և Յարութիւն Քրիստափորեանից 5 ր., 3, Ամերիկայից երեք անյայտ ընկերներից 30 ր., 4, Սուխումից—Նորականոյց աղօթատեղիի օծման և ջրօրհնէքի օրը ժողոված Եղիա Քեօսէեանի միջոցով 21 ր. 35 կ., Պարսկաստանի Սալմաստի Մահլամ գիւղացի Մ. Խուդավերդեան, Օ. Սարգսեան, Բ. Գրիգորեան, Յ. Բաղդասարեան. Ե. Յովհաննէսեան, Ս. Մանուկեան, Յ. Պետրոսեան, Մ. Աւագեան, Խ. Սահակեան և Մ. Հախվերդեան նուիրել են մէկ օրինակ «Մշակ» նոյն գիւղի հայոց ուսումնարանին, վճարելով ամեն մէկը մէկ ր.։

Երէկ ամսիս 14-ին Հախվերդի Աւագեանցի որդու մկրտութեան ճաշի ժամանակ Յովհաննէս քահանայ Ամիրխանեանցը քարոզ խօսաց և ի միջի այլոց ասաց. այս ճոխ սեղանը մեզ համար հարամ է, քանի որ մեր եղբայրները և քոյրերը սովից կոտորվում են, իսկ հալալ կը լինի եթէ այս ճոխ սեղանից նրանց էլ մաս ուղարկենք։ Այս բանի վրա ժողովեց 25 րուբլի հետեւեալ անձերից. Հախվերդի Աւագեանցից 3 ր., Կարապետ Աղայեանցից 3 ր., Աբէլ Աղայեանցից 3 ր. Իսահակ Գօզալեանցից 3 ր., տիկին Կորբօզից 2 ր., Յարութիւն Առաքելեանցից 2 ր., տիկնայք Սիրանուշ, Աննա և Հեղնար Աղայեանցներից 2 ր., Յովհ. քհ. Ամիրխանեանցից 1 ր., ոմն 1 ր., Յովհաննէս Բարայեանցից 1 ր., Յովհաննէս Առաքելեանցից 1 ր., Առաքել Յարութիւնեանցից 1 ր., Յարութիւն Աղայեանցից 1 ր., Ենոք Գէորգեանցից 1 ր. և խնդրում ենք այս գումարը հասցնել Ղարաբաղի սովեալներին։

Ստացանք արկածեալների օգտին 5 րուբլի հանգուցեալ Սալոմէ Ծուէրեանի յիշատակին Յարութիւն քհ. Միրիմանեանի միջոցով,

Յունվարի 22-ին, «Баку» լրագրի ասելով, Պետերբուրգ կը հասնի Կովկասեան Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը և այլևս չի վերադառնալ Կովկաս։ Կոմսը վերջնականապէս խնդիրք է ներկայացրել հրաժարականի մասին, պատճառաբանելով իր տկարութիւնը, որի համար բժիշկները խորհուրդ են տուել երկարատեւ հանգստութիւն պահպանել։ Գործերը ժամանակաւորապէս կը վարէ քաղաքացիական բաժնի օգնականներից մէկը և այդ պաշտօնի համար այլևս նոր մարդ չեն նշանակի՝ որովհետև մինչև Դումայի գումարվելը փոխարքայութիւնը կը ոչնչանայ։ Կովկասի կառավարութիւնը կը բաժանվի մի քանի ինքնուրոյն նահանգների և շրջանների։

Այս քանի օրերս Պետերբուրգում սպասվում է պարսկական արտաքոյ կարգի միսիան, որը բանակցելու է Ռուսաստանում 60,000,000 րուբլի փոխառութիւն կնքելու համար։ Լուրերին նայելով՝ այդ փոխառութիւնը պէտք է ապահովվի նոր շինվելիք երկաթուղիների և խճուղիների եկամուտներով։ («Б.»)

Թիֆլիսի պատերազմա-դաշտային դատարանին են յանձնված Կարապետ Մէկերիշվիլին, Նիկօ Խոսմրիձէն և Լէքսօ Նադիրիշվիլին, 1906 թ. ապրիլի 12-ին Գորու գաւառի կալուածատէր իշխան Գրիգորի Բէգտաբեգովին և նրա կառավարիչ Բատօն Մոսիաշվիլուն սպանելու համար։

Մեզ հաղորդում են, որ Հ. Համբարձումեանցը մօտ օրերս պիտի կարդայ իր երկրորդ դասախօսութիւնը՝ «Նորմատիւ էթիկան սօցիալիստների և անարխիստների դատաստանի առաջ»։

Բագուի նաւթարդիւնաբերական ժողովը դիմել է կովկասեան պօլիտեխնիկումի համար ընտրված կոմիտէտին յայտնելով, որ առաջիկայ աշնանից պօլիտեխնիկումը բացվելու է, որ դէպքում նա կը ստանայ 8,500 րուբլի, որը մտցված է նախահաշւի մէջ արդէն։ Այսուհետև տարվայ նախահաշւի մէջ կը մտցվի 17,000 րուբլի։

Յունվարի 12-ին, երեկոյեան ժամը 7-ին, Վօրօնցովի հրապարակում անյայտ չարագործների արձակած 2 գնդակով սպանվում է նոյն հրապարակում կօշկեղէնի խանութ ունեցող Ս. Խրլանովը։ Մարդասպանները ազատ են։

Նոյն օրը, նոյն ժամին, Ցիցիանովսկի վերելքում (Հալաբար) անյայտ չարագործներ մահափորձ են կատարում յիշեալ փողոցով անցնող Ար. Երզնկեանի («Հոսանք» լրագրի աշխատակից) և Ջինգեր ընկերութեան ծառայող Մանջավիձէի կեանքի դէմ։ Երզնկեանը մնում է անվնաս, իսկ արձակված գնդակներից թեթև ազդրից վիրաւորվում է Մանջավիձէն, որին տարել են Միքայէլեան հիւանդանոցը։ Մահափորձողները փախել են։

Յունվարի 14-ին, երեկոյեան ժամը 7-ին, Կաթոլիքական և Արաս-Աբաղեան փողոցի անկիւնում անյայտ չարագործներ ատրճանակներից գնդակաձգութիւն են սկսել ոստիկանական ծառայող Մելիք-Եգանովի վրա, երբ վերջինս անցնում էր իր թիկնապահ Խաչատուրովի հետ միասին։ Մելիք Եգանովը վիրաւորված է ազդրից, թիկնապահը՝ 6 վէրք է ստացել, վիրաւորված է մի կին, սպանված՝ մի աղջիկ և մի դռնապան։ Գնդակաձգութեան ձայնից փողոց են դուրս գալիս հարևան տներից, որի ժամանակ և վիրաւորվում է նոյնպէս Օգանեսով ազգանունով մէկը, մահացու կերպով վիրաւորվում են մի 14 տարեկան հրէայ պատանի և մի ուրիշ հրէայ։ Չարագործները փախել են։

Երէկ, յունվարի 15-ին, առաւօտեան ժամի 9-ին, Մօլօկանսկայա փողոցի վրա անյայտ մարդիկ մի քանի անգամ գնդակ են արձակում երկաթուղու ծառայող Իվան Գեիրաշվիլու վրա և սպանում։ Մարդասպանները անյայտ են։

Յունվարի 12-ի գիշերը Ռուսսկի կոչված փողոցում Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի շինութեան մօտ ոստիկանները գտել են մի մարդու սառած դիակ և տարել են Միքայէլեան հիւանդանոցը։

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը «հասցէների սեղանի» կանոնները խախտելու համար 50-ական րուբլի տուգանք է ենթարկել Թիֆլիս քաղաքի տանտէր— Մելքումօվին, Այվազօվին, Մուսէլօվին, Ժուժիեվին, Գուլօեանին, Օգանէզօվին, և Բօգովենկօյին և կնոջ Կ. Բաբայեանին։

Դադարեցրած «Երկիր» լրագրի խմբագիր բժիշկ Մուրադեանի գործը քննվելու է Թիֆլիսի դատաստանական պալատում։

Քաղաքային վարչութեան ընդունարանում ի ցոյց են դրված այն երիտասարդների, քաղաքացիների ու մէշչանների ցուցակները, որոնք ծնվել են 1885 թւի հոկտեմբերի և 1886 թւի հոկտեմբերի ժամանակամիջոցում և պէտք է զինուորական վիճակահանութեան ենթարկվեն այս տարի։ Այն երիտասարդները, որոնք ծնված են յիշեալ ժամանակամիջոցում և մտցված չեն ցուցակների մէջ, պարտաւոր են այդ մասին յայտնելու անմիջապէս զինւորական ատեանին վկայականը, որ մէշչաններ են։

Թիֆլիսի դատաստանական պալատի նոր նշանակված գլխաւոր նախագահ պ. Կօչուբէյի գալուստը Թիֆլիսում սպասվում է փետրվարի սկզբներին։

Մամուլի գործերի Թիֆլիսի № 1-ին կոմիտէտի կարգադրութեամբ յունվարի 13 ին դադարեցրած է «Աշխատանք» շաբաթաթերթը։

Բաթումի քաղաքագլուխը տեղեկացրել է պօլիտեխնիկումի հարցով զբաղվող գլխաւոր կոմիտէտին, որ Բաթումի քաղաքային դուման միաձայն որոշել է «Թիֆլիսում բացվող պօլիտեխնիկումների համար Բաթումի կողմից նշանակել ամենամեայ 2000 րուբլի, մտցնելով այդ գումարում քաղաքի ելմուտքի մէջ պօլիտեխնիկումը հիմնելու օրից»։

Թիֆլիսի գեներալ-նահանգապետ թոյլատրել է վերադարձնել «Отголоски» և «Знаніе» թերթերի յարքունիս գրաւած տառերը։

Մօտ օրերս լոյս կը տեսնէ վրացերէն լեզուով «Ջվէնի Կվալի» անունով մի օրաթերթ։ Լրագիրը լոյս կը տեսնէ շաբաթական երկու անգամ։

Պետերբուրգից ստացված տեղեկութիւնների համաձայն Սուխումի եպիսկոպոս գերապատիւ Կիրիոնը տեղափոխվում է Նիժնեգորոդեան թեմը։

Յունվարի 11-ին երեկոյեան քաղաքային վարչութեան մէջ տեղի է ունեցել ելեքտրաքարշների վրա հսկող մասնաժողովի անդամների նիստը Սուլխանովի նախագահութեամբ։ Նախ յարուցվել է հարց, որպէսզի 1) ելեքտրաքարշի կօնդուկտօրները անպայման պարտաւոր են իմանալ վագօնները ղեկավարելու տեխնիկան, վագօնների երթեւեկութեան ժամանակ վատմանների յանկարծակի հիւանդանալու դէպքում փոխարինելու համար, 2) մասնաժողովը վկայել է այն փաստը, որ վերջին ժամանակներս ելեքտրաքարշի վագօնները մաշվել են և արագութեամբ փչանում են շարժողութեան ժամանակ և դրանով էլ սաստիկ դժուարեցնում են վագօնների շարժողութիւնը, 3) մասնաժողովը որոշել է խնդրամատոյց լինել Փոխարքային, որպէսզի հրաժայ նահանգական վարչութեանը հաստատելու ելեքտրաքարշի շարժողութիւնը կանոնաւորելու համար սահմանված պարտադիր որոշումները, որովհետև ոչ մի ցուցմունք, տուգանքներ և ուրիշ տեսակ պատիժներ զօրութիւն չունեն եթէ նահանգապետի կողմից պարտադիր չէ դարձված։

Վլադիկավկազի երկաթուղային վարչութիւնը գաղտնի հրամանագրել է իր ստորադրեալ դիստանցիաների կառավարիչներին զգուշացնել նոր շինութիւններ կառուցանելը և վերանորոգութիւններ կատարելը ծառայողների բնակարանների մէջ, որովհետև մերձաւոր ապագայում երկաթուղին անցնում է "գանձարանի ձեռքը։ Պէտք է նկատել, որ այդ լուրերը պտտում էին դեռ 1902 թւականից սկսած։ («Баку»)

Ներքին գործերի մինիստրութիւնը վերջին օրերս «Сегодня» լրագրի ասելով՝ հեռագրով հրամանագրել է դադրեցնել քաղաքական կալանաւորների աքսոր ուղարկելը։ Այդ կարգադրութիւնը կապ ունի այն տատանումների հետ, որոնք գոյութիւն ունէին մինիստրական շրջաններում ձախ կամ աջ թեքվելու մասին։ Ինչպէս ասում է լրագիրը, այժմ կարգադրված է աքսորեալներին էտապով ուղարկել իրանց նշանակած տեղերը։

Մեզ հաղորդում են, որ Մանուէլեանի հաշուապահական դասընթացներում երեկոյեան պարապմունքները գեներալ-նահանգապետի թոյլտուութեամբ վերսկսվել են նորից։

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են, որ ֆրանսիական բանկիրների սինդիկատը, որի ղեկավարն է Ռուվիէն, ռուսաց կառավարութիւնից արտօնութիւն է ստացել Եկատերինոսլավի երկաթուղու Նիկիտովկա կայարանի մօտ շոգեմեքենայ և վագօններ շինելու արհեստանոց կառուցանելու համար։ Գանձարանը պարտաւորվում է օգտվել յիշեալ ընկերութեան վագօններից, վճարելով որոշ վարձատրութիւն. այդ վարձատրութեան մէջ մտնում է ի միջի այլոց պարտքը մաս մաս վճարելու արժէքը։ Միևնոյն ժամանակ բանկիրների ընկերութիւնը ստանում է ամբողջ Եկատերինինսկի երկաթուղին և իբրև ապահովութիւն գրաւ է տալիս 200 միլիօն րուբ.։

Նոյեմբերի 29 ին կալանաւորվել է Պետերբուրգում ուսանող մի ոմն Սարչենկի, որի մօտ խուզարկութեան ժամանակ գտնվել է 17 անձանց մի ցուցակ, որոնք կազմում են, ինչպէս պարզվել է այդ ցուցակից՝ ժողովրդական-սօցիալիստական կուսակցութեան կոմիտէն։ Այժմ, ինչպէս հաղորդում է «Страна» լրագիրը, դատախազը կարգադրել է պատասխանատուութեան ենթարկել վերոյիշեալ անձնաւորութիւններին, որոնց վրա բացվում է յանցաւոր միութիւն կազմելու յանցանքը։ Այդ ցուցակում ի միջի այլոց գտնվում են Պետական Դումայի յիշեալ կուսակցութեան թեկնածուների ազգանունները, ինչպէս Աննենսկի, Շնիտնիկով և ուրիշները։

Գաբոնի սպանութեան մասին կատարվող քննութիւնը, որ այնքան եռանդով առաջ էր մղվում սպանութիւնից անմիջապէս յետոյ, ներկայումս գտնվում է կարևոր գործերի քննիչ Զայցեվի մօտ և մնում է նոյն դրութեան մէջ, ինչ որ անցեալ տարվայ գարնանը, որովհետև նա վերջին տեղն է գրաւել մի շարք կարևոր գործերի մէջ։ Հարցափորձի են ենթարկվել Գաբոնեան բաժանմունքի բոլոր ներկայացուցիչները՝ տ. Ուզդալեվա, Դ. Վ. Կուզին, բանւոր Պետրովը, մի քանի գրականագէտներ և շատ ուրիշ պետական ծառայութեան մէջ գտնվող անձնաւորութիւններ։ Այդ գործի մասին ժողոված է քննական ահագին նիւթ միայն և ուրիշ ոչինչ։ Մարդասպանների հետքերը չեն գտնված մինչև այժմ և հասարակութիւնը դեռ երկար կը սպասէ, մինչև Օզերկի ամառանոցի սպանութեան ճշմարտութեան երեւան գալը։ («Страна»)

Ժանդարմերիական բարձր վարչութեան կարգադրութեան համաձայն, կասպիական ժանդարմերիայի բաժանմունքը յունվարի 9-ից փոխադրված է Դերբենդ և այսուհետև կոչվելու է Դերբենդի բաժանմունք։ («Баку»)

ՂԱԼԱՂԱՅԻՑ մեզ գրում են. «Յունվարի 7-ին գիշերվայ ժամը 1 և 35 րոպէին սկսեց գետինն օրօրվել արևմուտքից արևելք մեղմ կերպով. 5 վայրկեանից յետոյ մի այնպիսի ահեղ դղրդոց և հարուած լսվեց, որ քիչ մնաց տներն հիմնայատակ քանդվէին. շատերն սարսափահար տներից դուրս էին փախել և զարմանալին այն է, որ շներն էլ զգացին և սկսեցին հաչել ու ոռնալ. եթէ վերջին ուժեղ հարուածը մի քանի վայրկեան շարունակվէր՝ այժմ գիւղը փլատակների կոյտ կը ներկայացնէր։ Այս տարի ձմեռն այնքան մեղմ էր, որ մի քանի տեղ մամխի կոչված ծառերը ծաղկեցին. ամսիս 2-ին ամբողջ օրը ձիւն եկաւ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐՍԻՆ ԱԴԱՆԱՅԻ ԵՒ Կ. ՊՕԼԻՍ-ԲԱՂԴԱԴԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ

(Թղթակցութիւն «Temps»-ին Կ. Պօլսից)

«Temps» լրագիրն 1906 թ. յունվարի 20-ի (Ն. տ.) իր համարում յայտնում էր, որ Մերսին-Թարսուս-Ադանայի երկաթուղային փոքրիկ գիծը, որ ընդամենը 67 կիլոմետր երկարութիւն ունի, գերմանացիների ձեռքն է անցել շնորհիւ այն բանի, որ այդ գիծը կառուցանող ֆրանսիական ընկերութեան բաժնեթղթերի (ակցիա) մեծ մասը գնվել է գերմանացիների կողմից։ Աւելած էր նմանապէս, թէ, այդպիսով, Կ. Պօլիս-Բաղդադ-Բասրայի երկաթուղին, Պարսից-Ծոցում իր վերջին կայանը հասնելուց առաջ, կարող էր դէպի Միջերկրական Ծովն ապրանք արտահանելու ճանապարհ ունենալ։ Բայց որպէսզի կարելի լինի այս նպատակին հասնել, ի հարկէ, անհրաժեշտ է օսմ. կառավարութիւնից ստանալ Մերսին-Թարսուս-Ադանայի գծի սեփականութեան պաշտօնական այն գրութիւնը, որով կառավարութիւնն այդ գծի պաշտօնական տէր ճանաչէ գերմանացիներին։ Դրանից յետոյ է միայն, որ գերմանացիները կարող են միացնել յիշեալ գիծը Բաղդադի գծին։ Արդ՝ վերջին օրերս մի քանի թերթեր և հեռագրական գործակալութիւններ այս ձեռնարկի մասին այնպիսի սխալ տեղեկութիւններ հաղորդեցին, որ չի կարելի կասկածել այդ լուրերի հեղինակների ունեցած բացարձակ տգիտութեան մասին այս խնդրի վերաբերմամբ։ Ուրեմն շահեկան պիտի լինէր, ի լրումն 1906 թ. յունվարի 20-ին «Temps»-ի տուած տեղեկութիւնների, հաղորդել հետեւեալը.

Մերսին-Ադանայի գծի վիճակը ոչ մի փոփոխութիւն չի կրել, չը նայած որ բաժնեթղթերի նոր գնողներն Բաղդադի երկաթուղագծից ուղղակի շահ ունեցող անձնաւորութիւններ են։ Մերսին-Ադանայի երկաթուղին ֆինանսական տեսակէտից էլ անկախ է բոլորովին, քանի որ յանձնառութեան տեւոյի արտօնութեան պայմաններն ու դաշինքը շատ տարբեր են Բաղդադի գծերից։ Նախ որ Մերսին-Ադանայի երկաթուղագիծը կիլոմետրական երաշխաւորութիւնից զուրկ է։

Ճիշտ է, Մերսին-Ադանայի գիծը, վաղ կամ ուշ, պէտք է միացվի Կոնիա-Բաղդադի գծին, բայց այս նպատակով առ այժմ դեռ ոչինչ չի կատարված, և նոյնպէս կանխահաս է Եումուրթալըկի մասին խօսք անելը, որպէս՝ Մերսինի փոխարէն՝ Բաղդադի գծի Միջերկրական Ծովի վրա կայան լինելիք տեղ, չը նայած որ մի քանի տեսակէտներից բաղձալի է նկատված այդ։

Մերսին գնացած գերմանացի երկրաչափներն այնտեղ ուղարկվել են քննելու համար թէ ճանապարհը և թէ երկաթուղային նիւթեղէնները, որոնք, ինչպէս ասում են, խիստ ողորմելի դրութեան մէջ են գտնվում։

Բաղդադի երկաթուղիների ընկերութեան առաջին զբաղումը, Կոնիա-Բուլգուրլու գիծը շինելուց յետոյ (այս վերջին գիծը 200 կիլոմետր երկարութիւն կունենայ), կայանալու է այդ գծի երկրորդ մասի շինութեան մէջ, որը, Բուլգուրլուից սկսելով, կերկարի 200 կիլոմետր դէպի առաջ։ Հէնց այս երկրորդ մասի շինութեան ճանապարհին, Բուրգուրլուից 170 կիլոմետր հեռու, հանդիպում է Ադանան։ Բայց, մենաշնորհի տրամադրութեան համաձայն, այդ գիծը պիտի անցնէ Ադանայից կամ նրա մօտից, և միացման խնդիր չը կայ հրապարակում։

Այս գծի շինութիւնն այնքան էլ շուտով չի սկսվի, որովհետև կառավարութիւնը կիլոմետրական բաւարար երաշխաւորութիւններ չունի։ Եթէ խնդիրն ուրիշ կերպ լինէր, այդ դէպքում նեղութիւն չը պիտի կրէին դրամագլուխ գտնելու համար։ «Deu Or. Corr.»-ը վերջերս հաղորդել էր, թէ Կոնիա-Բուլգուրլու-Ադանա գծի կառուցումը յանձնվելու է Ֆրանկֆուրտում գտնվող մի ֆիրմայի, և դրամագլուխն էլ պիտի հայթայթվի ֆրանսիական մի սինդիկատի և անգլիացի բանկիրների մի խմբակի կողմից։ Սակայն այդ լուրը հիմնովին հնարովի է։ Քանի դեռ կիլոմետրական երաշխաւորութիւններ չեն տրվել, այնքան էլ անորոշ դրութեան մէջ կը մնայ խնդիրը, և ոչ մի բանի մասին որոշում չի կայացվել։

Մի քիչ վերև գրել էի, թէ բաղձալի է, որ Եումուրթալըկը լինի այն կէտը, ուր Բաղդադի երկաթուղին կայան ունենայ Միջերկրական Ծովի վրա, Եւ ահա թէ ինչու։ Չը նայած, որ Մերսինի նաւահանգիստը բաւական ապահով և ընդարձակ է, բայց ցանկալի չափով խորութիւն չունի, և այդ պատճառով շոգենաւերն այդ նաւահանգստում ծովեզերքից բաւականին հեռու են կանգ առնում։ Եումուրթալըկի նաւահանգիստը ընդհակառակը, հիանալի դիրք ունի։ Նա նման է ընդարձակ մի աւազանի, բացարձակապէս ապահով և լաւ պատսպարված, և ծովի հետ հաղորդակցութեան է մտնում մի նեղ անցքի միջոցով։ Բայց, ստացած տեղեկութիւններիս համաձայն, Թիւրք կառավարութիւնը տրամադրութիւն չի ցոյց տալիս Միջերկրական Ծովի կայանը Մերսինից Եումուրթալըկ փոխադրելու։ Բայց կարծվում է, որ կառավարութեան տրամադրութիւնները կարող են փոփոխութեան ենթարկվել, սոյն կարևոր խնդիրը սեղանի վրա դրվելուց առաջ։

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՆԳԼԻԱՅԻ ԴԷՄ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

II

Արդէն հաւատացել ենք մեզ—շարունակում է «Թայմս»-ի խմբագիրը,—և դարձեալ կը հաւատանք անկասկած, թէ այս յանկարծական գործունէութիւնը, մի այնպիսի ասպարէզում, որը մինչև այժմ անտես էին արել գերմանացի վաճառականները և նրանց ձեռնարկութիւնները պաշտպանող և երբեմն էլ վարող քաջալերող կառավարութիւնը, ուրիշ շարժառիթ չունի, բայց եթէ գերմանական առևտրի շըրջանակն ընդարձակելու ցանկութիւնը։

«Koeln. Zeitung»-ը 10 օրից ի վեր մի հետաքրքրական փութկոտութեամբ քանիցս շեշտեց և ի վեր հանեց այս կէտը, Բեռլինից ստացած իր ներշնչեալ զեկուցումներում։ Նա ապահովացրեց մեզ, թէ Թեհրանում հիմնելի գերմանական բանկը «ոչ մի դէպքում քաղաքական նկարագիր չը պէտք է կրէ երբեք». Նա պէտք է ունենայ «զուտ առևտրական» բնաւորութիւն, քանի որ գերմանական ձեռնարկութիւնները Պարսկաստանում «զուտ տնտեսական» են, ուրիշ ոչինչ։ Բացի այդ՝ Գերմանիան ամենևին մաս և բաժին չը պիտի ունենայ պարսկական փոխառութիւններում և իր «գործունէութիւնների ծրագրից բացարձակապէս դուրս է թողնված պետական փոխառութիւններին մասնակցութիւնը կամ 'այծեայծումը»։ Բանը նրանումն է, թէ գերմանական բանկը երկար ժամանակ պիտի պահէ իր ոչ-քաղաքական բնաւորութիւնը։ Բայց մեր կողմից այս իմաստով ամենափոքր կասկածն անգամ հերքվում և պախարակվում է գերմանական մամուլի կողմից, որպէս մի անվայել, անտեղի ու անազնիւ կասկած։ Այդպէս կարելի էր մտածել, եթէ երկարատև փորձը չունենայինք գերմանական առևտրական ձեռնարկութիւնների, ուրիշ օտար երկրներում, Աֆրիկէի մէջ, օրինակ, Չինաստանում կամ Մարօկկօյում, որոնց առաջ բերած հետևանքները, քաղաքական հետևանքները դեռ նոր վառ են ամենքի յիշողութեան մէջ։ Գերմանիայի առևտրական շահերը, Մարօկկօյում, սկզբից շատ փոքր էին։ Բայց երբ առիթը ներկայացաւ, նրանք այնքան խոշոր համարվեցին, որ առիթ ու պատրուակ դարձան խոշոր պահանջների, որոնք մազ մնաց պատերազմ առաջ բերէին Եւրոպայում։ Այդ առիթով մինչև անգամ յայտարարվեց, թէ Գերմանիայի նիւթական շահերը որքան էլ որ փոքր լինեն Մարօկկօյում, Գերմանիան իրաւունք ունի նրանց վրա հիմնվելով պահանջներ անելու, որոնք մի անգամ մէջտեղ դըրվելուց յետոյ, նրա համար մի պատւի խնդիր դարձաւ պնդել նրանց վրա մինչև յետին կէտը։

Թէ ինչպէս գերմանական փոքրիկ առևտրական շահերը շուտով դառնում են գերմանական խոշոր, ահարկու, հասարակական շահեր, բնական է, որ այդ հանգամանքը խորհրդածութեան նիւթ լինի և Պարսկաստանի մասին, քանի որ Անգլիա և Ռուսաստան արդէն ծանրակշիռ շահեր ունին նոյն երկրում։ Ինչպէս միշտ ասել ենք, այդ շահերը հակասական և անհաշտ չեն։ Եւ ուրախ ենք լսելով, որ ռուս կառավարութիւնը այլ ևս չէ մերժում մեր այս հայեցքը։ Բայց եթէ Ռուսաստանն և մենք, մեր փոխադարձ օգտից առաջնորդված՝ պէտք է կարգադրենք մեր շահերը Պարսկաստանում, բացայայտ է, որ պէտք է կարգադրենք մեր երկուսի մէջ, առանց որևէ միջամտութեան, որևէ «պարկեշտ միջնորդի»*), որը կարող է ձգտել այդ միջնորդութիւնից իր համար երկկողմանի շահեր հանելու։ Ռուսաստանն ու Անգլիան կարող են ձեռնարկել Պարսկաստանում իրանց ունեցած ընդհանուր շահերի կարգադրման աւելի հանդարտ մտքով, աւելի հաշտարար ոգով, քան մի քանի տարի առաջ։ Տարիներից ի վեր Պարսկաստանի վերաբերմամբ մեր հետեւած ընթացքի երկու գլխաւոր կէտերը եղել են, առաջին՝ մեր առևտրի պաշտպանումը—որին ծանր հարուած հասցրեց 1901 թ. Ռուսաստանի կողմից Պարսկաստանին հարկադրված մաքսային սակացոյցը—և երկրորդ՝ ապահովումը մեր հնդկական սահմանների։ Այս երկու խնդիրներն են եղել միշտ մեր քաղաքականութեան գլխաւոր նպատակակէտը, թէպէտև մեր հնդկական սահմանների համար վտանգն այժմ այնքան զգալի չէ այլևս (ակնարկում է անգլօ-ճապօնական դաշնակցութեան)։ Բացի պատերազմի անակնկալ դիպուածից, կայ միայն մի ճանապարհ, որով կարող է ծանրապէս վտանգվել ռազմային այն մեծ դիրքը, որ մենք կառուցել ենք Հնդկաստանի մեր հիւսիս-արևմտեան սահմանագլխի վրա։ Այսինքն, Հնդկաստան արշաւելու համար, Ռուսաստանը, փոխանակ հէնց ճակատից խփելու, կարող է իր զօրքերն անցնել Սէիստանի պարսկական նահանգով, որը միակ գործնական խարիսխը կը դառնայ մի այդպիսի գործողութեան, որովհետև Ռուսաստանը Սէիստանից դէպի հարաւ արշաւելով՝ կարող է պարսկական Բելուջիստանից իջնել Հնդկական Ովկիանոս։ Հետևաբար, մեր սահմանները այդ կողմից պաշտպանելու համար, մեզ մնում է միայն թոյլ չը տալ, որ յիշեալ վայրերը ընկնեն ռուսական ազդեցութեան տակ, այն «խաղաղ թափանցումով», որի մէջ ռուսները մեծ աջողութիւն են ցոյց տուել այլուր։ Հիւսիսում կայ Խորասանի նահանգը, սահմանակից անդրկասպեան ռուսական ստացուածքների, ուր, ի հարկէ, Ռուսաստանը պէտք է պահանջէ իր շահերի և համբաւի ապահովութեան համար ազդու երաշխաւորութիւններ։ Բայց Ռուսաստանի և Անգլիայի այժմեան դիրքը Պարսկաստանի հանդէպ, շատ նման են, և համարեա նոյնօրինակ այն դիրքի, որ ունէին սրանից 10 տարի առաջ Անգլիա և Ֆրանսիա Սիամի հանդէպ։ Սիամական հարցը, որ մազ մնաց պատերազմ առաջացնէր Անգլիայի և Ֆրանսիայի միջև այն ժամանակ, երբ լորդ Ռօզբերի արտաքին գործերի մինիստր էր, այսինքն 1893 թւին, երեք տարի յետոյ կարգադրվեց Սօլզբերիի կողմից, անգլօ-ֆրանսիական համաձայնութեամբ, երբ հաստատվեց և շեշտվեց 1904 թ., և որ, Սիամի ապագան ապահովելով հանդերձ, ճշդեց և սահմանեց ֆրանսիական և անգլիական ազդեցութեան շրջանակը Սիամում։ Այս համաձայնութեամբ ոչ միայն Սիամի թագաւորութեան խաղաղութիւնն ու զարգացումը երաշխաւորվեցին ամբողջապէս, այլ և վերջ դրվեց միջազգային ձգտեալ դրութեան և ճանապարհ հարթվեց անգլօ-ֆրանսիական սիրալիր համաձայնութեան և գործակցութեան, որի շնորհիւ, վերջերումս, կնքվեց մի մեծ փոխառութիւն Լոնդոնի և Պարիզի հրապարակներում, Սիամի համար խիստ շահաւէտ պայմաններով։ Ասիական գործերի ներկայ դրութեան մէջ, մենք պատճառ չենք տեսնում, թէ ինչու համար Անգլիայի և Ռուսաստանի միջև մի նմանօրինակ տնտեսական կարգադրութիւն, նոյնքան շահաւէտ չը պիտի լինէր Պարսկաստանի, որքան Ռուսաստանի և մեր միջև բարեկամական հասկացողութեան համար։ Ընդհանրապէս երկու երկիրներն էլ պատճառներ ունին ցանկանալու մի այդպիսի համաձայնութիւն, կարգադրութիւն, մինչև անգամ եթէ հարկաւոր լինէր դրա իրագործման համար յիշել ֆրանսիական առածը. «Լաւագոյնը թշնամի է լաւի»։

Բայց որպէսզի մի այդպիսի բարեկամական կարգադրութիւն աջողութեամբ պսակվի, անհրաժեշտ է, որ առիթ կամ պատրուակ չընծայվի մի երրորդի՝ միջամուխ լինելու անգլօ-ռուս առանձին բանակցութիւնների և համաձայնութեան խնդրում, ինչպէս և յիշեալ տնտեսական շահերում»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յունվարի

ԼՈՆԴՈՆ, 11 յունվարի։ «Թայմս», նախագահ Սէյօնիի արտասանած ճառի առիթով մի առաջնորդող յօդուած է նուիրել, որի մէջ ասում է, որ անգլօ-ճապօնական դաշնակցութեան հիմնական նպատակն է՝ հաշտութիւն կապել Ռուսաստանի հետ, հաշտութիւն, որպիսին ամենից լաւագոյն կերպով կարող է իրականանալ Ռուսաստանի և դաշնակիցներից իւրաքանչիւրի միջև սրտագին համաձայնութիւն կնքվելով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունվարի։ Յունվարի 11-ին գերմանական դեսպանի մօտ, դեսպանատան հիւրասենեակում տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութեան հանդէս։ Ներկայ էին Բարձրագոյն պալատի բոլոր պաշտօնեաները, սկսած մինիստրից, Պետական Խորհրդի նախագահը, բոլոր անդամները, մինիստրները, շքախումբը, գեներալիտէտը և դիպլօմատիական ամբողջ մարմինը։ Սպիտակ և միւս երեք դահլիճներում կազմված էր նախաճաշ։

ԲԵՌԼԻՆ, 12 յունվ.։ Յունվարի 11-ի ընտրութիւնների առիթով բանկերը փակվեցին ցերեկվայ ժամը 1-ին. փակված են նաև բօրսան և դպրոցները։ Առևտրական ֆիրմաների, քաղաքային ինքնավարութեան, պօստի և հեռագրական վարչութեան ծառայողները արձակվել են՝ ձայնատուութեանը մասնակցելու համար։

Կ. ՊՕԼԻՍ, 12 յունվ.։ Ջիդդայում երեք օր է, որ ժանտախտի դէպք չի եղել. վերջին ժամանակում ընդամենը եղել են 13 դէպք, որոնցից 10-ը վերջացել են մահով։ Ֆրանսիական «Գալատա» նաւը 60 բանւորներով ընկղմվել է։

ԲԵՌԼԻՆ, 12 յունվ.։ Ընտրութիւնների կրակոտ շրջանն է. Վերջնականապէս պարզվել է, թէ հանուր Գերմանիայի 397 ընտրողական վիճակներում ովքեր են թեկնածուներ առաջարկվել։ Նախկին համարեա բոլոր պատգամաւորները դրել են իրանց թեկնածուները։ Կենտրոնի կողմից իբրև թեկնածու առաջարկվել է գաղթավայրերի խնդրին լաւ տեղեակ Էրցբերգերը 30 վիճակում. կենտրոնի պարագլուխ Շպակը՝ 12-ում սօցիալ-դեմօկրատ Բեբելը՝ 11 վիճակում։ Բեռլինում, առաջին վիճակում, որը միակն է, որ չէ միացել սօցիալ-դեմօկրատներին, լիբերալները և պահպանողականները պաշտպանում են ազատամիտ Դամաշկօի և Կեմպֆի թեկնածութիւնը։ Սօցիալիստները դրել են բանկիր Բլէյխրօդէրի փեսայ միլիօնատէր պրիվատ-դոցենտ Արօնսի թեկնածութիւնը։

ԻՒԶՈՎԿԱ, 12 յունվարի։ Եկատերինոսլավի երկաթուղու Բերդյանսկի գծի վրա ճանապարհորդական գնացքը խրվել է ձիւնի հիւսերի մէջ։ Օգնութեան գնացած բանւորական գնացքը գտել է նրան ձիւնով բոլորովին ծածկված։ Ճանապարհորդներին ազատելու համար ուղարկված են սայլեր։ Շատ տեղերում բանւորները սառնամանիքի և քամու պատճառով հրաժարվել են ճանապարհը մաքրել, չը նայած որ առաջարկվում է մեծ վարձ օրին։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 13 յունվարի։ Հաղորդում են, որ մարդկանց սառչելու դէպքեր են եղել։ Երկաթուղային երթեւեկութիւնը շարունակ խաչընդոտների է հանդիպում ձեան կոյտերի պատճառով։

ՀՌՈՄ, 12 յունվարի։ Անընդհատ ձիւն է գալիս։ Ամենուրեք ուժեղ սառնամանիքներ են։

13 յունվարի

ԼՈՆԴՈՆ, 12 յունվարի։ «Թայմսին» հաղորդում են Տօկիօից, որ զինուորական մինիստրը նախահաշւի հարցով զբաղվող մասնաժողովի նիստում դրականապէս յայտնում է, որ Ճապօնիայի փութաջանութեամբ սպառազինումը բնաւ ուղղված չէ օտարազգի մեծ պետութիւններից որևէ մէկի դէմ։ Մինիստրը ասել է, որ Ռուսաստանի հետ մղվող բանակցութիւնները պէտք է որ անշուշտ ձգձգվեն, քանի որ շատ սակաւ են ստացվում տեղեկութիւններ այն շրջանների մասին, որոնց և վերաբերում են բանակցութիւնները. սակայն բանակցութիւնները եռանդով և աճապարանքով առաջ են ընթանում. չեն լուծված վիճելի հարցերից քչերը միայն. սխալ է, թէ Ճապօնիան զինվում է անգլիական խորհուրդների ազդեցութեան տակ. համանման հարցերը դուրս են միջազգային քննութեան շըրջանից։ Մանջուրիայում—Ճապօնիայի գործադրած քաղաքականութիւնը միանգամայն հիմնված է պայմանագրերի վրա։ Բայց այնտեղ, ուր յիշեալ պայմանագրերը չեն գործադրվում, Ճապօնիան պահանջում է, որ իրան արտօնութիւններ շնորհվեն, որոնցով սկզբներում օգտվում էր Ռուսաստանը Չինաստանի լռելեայն համաձայնութեամբ։ Նոյնութեամբ բացէ ի բաց սխալ են, որ մասնաժողովի Կուան-չէն-ձահում ցոյց տուած գործունէութիւնը անյարմար հանդիսացաւ. մասնաժողովը ժողովեց հարկաւոր տեղեկութիւններ այն անձանց համար, որոնք Պետերբուրգում քննում են ռուսական և ճապօնական երկաթուղագծերը միացնելու հարցը։

Նոյն լրագրին հաղորդում են Տօկիօյից, որ Ռուսաստանը մինչև այժմ քայլ չէ անում՝ Տօկիօում գտնվող ռուսական միսիան դեսպանութեան վերածելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի՝ Յունվարի 12-ի գիշերը վախճանվեց ծովային մինիստրի օգնական Ռիմսկի-Կորսակովը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի։ Պաշտօնական։ Մինիստրների խորհուրդը քննել և որոշել է գաւառական վարչութիւններ հաստատելու գլխաւոր հիմունքները։ Գաւառական վարչութեան նոր կազմակերպութեան հիմքում մտադրվում է դնել առօրէ յիշատակվող կազմակերպութիւն գիւղացիների դասային (сословное) առանձնայատուկ վարչութիւնը—շրջանային և շինական, նոյնպէս և գիւղացիական գործերը վարող յատուկ հիմնարկութիւնները, զեմստվային կառավարիչները և սրանց համապատասխան պաշտօնները, գաւառական համագումարները և նահանգական վարչութիւնները պէտք է վերացվեն. դրանց փոխարէն բոլոր դասերի համար հաստատվում են շինական, շրջանային, թաղական, գաւառական և նահանգական հաստատութիւններ։ Շինական հաստատութիւնները, որոնց իրաւունք է տրվում զբաղվել բացառապէս տնտեսական ֆունկցիաներով, կազմվում են շինական հասարակութիւններից և գիւղական միութիւններից, որով իւրաքանչիւր գիւղ, շէն, արուարձան կազմում է ինքնուրոյն շինական հասարակութիւն, որի անդամներ հանդիսանում են, առանց դասային խտրութեան այն անշարժ կայքերի և առևտրա-արդիւնաբերական հաստատութիւնների բոլոր տէրերը, որպիսիները ընկած են շինական նստակեաց ազգաբնակութեան դաստակերտների սահմաններում։ Շինական հաստատութիւնները, որոնց իրաւունք է տրվում զբաղվել բացառապէս տնտեսական ֆունկցիաներով. կազմվում են շինական հասարակութիւններից և գիւղական միութիւններից, որով իւրաքանչիւր գիւղ, շէն, արուարձան կազմում է ինքնուրոյն շինական հասարակութիւն, որի անդամներ հանդիսանում են, առանց դասային խտրութեան, այն անշարժ կայքերի և առևտրա-արդիւնաբերական հաստատութիւնների բոլոր տէրերը, որպիսիները ընկած են շինական նստակեաց ազգաբնակութեան դասակարգերի սահմաններում: Շինական հասարակութիւնը վայելում է իրաւաբանական անձնաւորութեան իրաւունքներ իրաւունք ունի դրամական տուրքեր վերցնել իր սահմաններում գտնուող առևտրա-արդիւնաբերական հաստատութիւններից և կալուածքերից: Ցիշեալ վարչութեան հիմնարկութիւններն են ա) շինական ժողովը (поселковый сходъ)—կարգադրիչ մարմին և բ) շինական տանուտէր՝ կարգադրիչ մարմին: Շինական հասարակութիւններին իրաւունք է շնորհվում միանալ միմեանց հետ, այլև յիշեալ հասարակութիւններին չը պատկանող մասնաւոր սեփականատէրերի հետ կազմել կամաւոր դաշնակցութիւններ՝ շինական վարչութեան ձեռքով կառավարելու առարկաներին վերաբերվող նպատակները իրագործելու համար: Շրջանները վերակազմվում են գիւղացիական դասային հաստատութիւնից՝ զէմստվային համադասային հաստատութիւն, իրանց վերա պահելով հասարակական, տնտեսական և ադմինիստրական-ոստիկանական ֆունկցիոնները. Վերակազմված շրջանը, որի կազմի մէջ մտնում են նաև եկեղեցական, վանքապատկան և հասարակական կալուածքները, ունի իրաւաբանական անձի իրաւունք և ինքնաօրէնութեան իրաւունք: (Право самооблоренія)

---

*) Սա այն դարձուածքն է, որ գործ ածեց Բիսմարկ Գերմանիայի համար, Բեռլինի վեհաժողովի առիթով, միջազգային հարցերի կարգադրութեան վերաբերմամբ։ Ծ. Թ.

Շրջանային վարչութեան հիմնարկութիւնները լինելու են. Ա) Շրջանային ժողովը,—կարգադրիչ մարմին, բ) շրջանային տանուտէր որ խոշոր շրջաններում փոխարինվում է շրջանային վարչութեամբ (управа)—գործադիր մարմին գ) վարձու շրջանային պաշտօնեութիւն—տասնեակներ և հարիւրակներ: Շրջանային ժողովը կազմվում է հողատէր հասարակութիւնների ընտրեալներից և այն մասնաւոր սեփերի ընտրեալներից որոնք ընկած են շրջանների. սահմաններում և ենթակայ են անշարժ կալուածքերի շրջանային կազմութեան, նաև շրջանների սահմանակից գիւղերի, պետական գանձարանի, ուդէլների և վանքերի ներկայացուցիչներից:

Թաղական վարչութիւններ յարակցվում են որոշեալ տէրրիտօրեաներին, որոնք երկու անգամ մեծ են զէմստվային պետերի հողամասերից: Կառավարութեան գլուխ կանգնած է Թաղամասի կառավարիչը, որ այդ Թաղամասի սահմաններում հանդիսանում է իբրև կառավարական ընդհանուր իշխանութեան ներկայացուցիչ: Նրա գլխաւոր պարտականութիւններն են. հսկել շինական շրջանային վարչութեան օրինական գործողութիւնների վրա, ժողովել տուրքերը, կատարել կառավարական հաստատութիւնների յանձնարարութիւնները: Թաղամասի կառավարչի պարտականութիւններին պէտք է միացնել և գիւղացիների հողային կառավարվելու աւարտման գործը, որ ներկայումս դրած է հաշտարար միջնորդների և զէմստվային պետերի վրա:

Գոյութիւն ունեցող կառավարական գաւառական վարչութիւնը նոր նախագծվող կարգով միանում է գաւառապետի և գաւառական խորհրդի պաշտօնների հաստատմամբ: Գաւառապետը միաժամանակ կոչվում է գաւառական վարչութեան կառավարիչ: Վերջինիս պաշտօնը չէ կարող պարփակվել ոչ ուրիշ պաշտօններով, բայց եթէ միայն գաւառական պարագլխի պաշտօնի մէջ:

Գաւառական խորհուրդը բաղկանում է ընդհանուր և մի քանի առանձին հաստատութիւններից, որոնք ղեկավարվում են գաւառական վարչութեան կառավարչի նախագահութեամբ: Տեղական խորհրդի բոլոր մասնաժողովների իբրև պարտաւոր անդամներ ներկայանում են գաւառական ազնուականութեան պարագլուխը և գաւառական խորհրդի մշտական անդամներից մէկը: Խորհրդի առանձին հաստատութիւնների համար հրաւիրվում են, բացի վերոյիշեալներից, նաև գաւառական զեմստվային վարչութեան (ուպրավա) նախագահը, քաղաքագլուխը, տեղական դատաւորը, դատախազի օգնականը, գաւառական ոստիկանութեան վիճակային կառավարիչը, զինւորական հրամանատարը, հարկատու տեսուչը և գաւառական ադմինիստրացիայի այլ պաշտօնեաները:

Գաւառական վարչութեան վերակազմութեան հետ միասին նախատեսնված է նաև՝ փոփոխութեան ենթարկել գաւառական զէմստվային ժողովի համար ընտրող ձայնաւորների դասային ընտրութիւնները և վերաբերվող գոյութիւն ունեցող կանոնները: Այս խնդրի նրկատմամբ նախագծվում է սահմանել հետևեալ նոր կարգը. 1) գաւառական զէմստվային ձայնաւորների ընտրութիւնը տեղի է ունենում ա) հողատէրերի գաւառական ընտրողական ժողովում, բ) առևտրա-արդիւնաբերական հաստատութիւնների և տէրերի և քաղաքային սեփականատէրերի գաւառական ընտրողական ժողովում, և գ) շրջանային ժողովներում. 2) Իւրաքանչիւր ժողովում ընտրվող ձայնաւորների թիւը որոշվում է ժողովին մասնակցողներին պատկանողների թիւն համապատասխան—150000 ր. լիակատար ցենզով:

Գաւառական վարչութեան բարենորոգումը մտադրվում է աւարտել նրանով որ գաւառական զէմստվային հաստատութիւններին տրվելու է աւելի լայն լիազօրութիւններ, այլ և սահմանել փոխադարձ յարաբերութիւն գաւառական զէմստվային հաստատութիւնների—մի կողմից և կառավարական գաւառական հաստատութիւնների մէջ—միւս կողմից: Գաւառական վերակազմութեան յիշեալ գլխաւոր սկզբունքների հիման վրա—Ներքին գործերի մինիստրութեան զէմստվային բաժնում ներկայումս մշակվում են համապատասխան որոշումներ, որոնք, մինիստրների խորհրդի մէջ քննվելուց յետոյ, մտցնվելու են Պետական Դումա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվ.: Ներքին գործերի մինիստրութեանկից գտնվողմատակարարական բաժինը յունվարի 11-ին դիմել է քաղաքապետին, խնդրելով հրամայել, որ անյապաղ ծանուցվի Լիդվալ վաճառականին, որ համաձայն մատակարարողական խորհրդակցութեան կանոնագրքի, որ հաստատված է մինիստրից, դեկտեմբերի 27-ին Լիդվալի արած առաջարկը երկարացնել նրա հետ հաց հասցնելու վերաբերմամբ կապած պայմանագրի պայմանները, չէ ընդունվել և մերժվել է բոլոր մասերով: Ընդամենը քաղաքապետը Լիդվալ վաճառականին 7 օր ժամանակ է տուել վերադարձնելու մինիստրութեան ներթից դուրս հաց հասցնելու և ալրանքը պակասեցրած գներով տեղափոխելու համար տուած վկայաթղթերի ինչպէս գործադրած, այնպէս և ձեռք չը տուած վկայականների և հաստատութեան թղթերի կազմելը, բացի դրանից ներկայացնել մինիստրութեան, համաձայն 1906 թ. սեպտեմբերի 20-ի պայմանագրի, կայարաններում հասցրած հացի մասին ճշգրիտ հաշիւ:

ՄԱԴՐԻԴ, 12 յունվարի: Կազմված է նոր մինիստրութիւն, որի գլուխն է կանգնած Մաուրան:

ԲԵՐԼԻՆ, 12 յունվարի: Ձայնտւութիւնը ընթանում է կարգ ու կանոնով և հանգիստ: Առաջին վիճակում յաղթող հանդիսացաւ իշխան Բիւլովը: Նրան ոգևորված և ցնծագին ողջունեցին:

ՍՕՖԻԱ, 13 յունվարի: Երեքօրեայ վիճաբանութիւններից յետոյ, օպպօզիցիայի բուռն բողոքների տարափի տակ, ժողովը ընդունեց համալսարանը փակելու և պրոֆէսօրներին արձակելու առիթով արած առաջարկը:

ՄՕԶԻՐ, 13 յունվ., Այրվեց «Молнія» լուցկի պատրաստող գործարանը:

ՊԱՐԻԶ, 13 յունվ.: Սենատը 280 ձայնով ընդդէմ 16 ի ընդունեց պետական եկամտի նախագիծը լրիվին:

ՎԻԵՆՆԱ, 13 յունվ.: Պատգամաւորների պալատը ընդունեց նորընտիր զինւորների օրինագիծը, Նաւագնացութեան առևտրին աջակցութիւն ցոյց տալու նկատմամբ կազմած օրինագիծը և աւստրիական Լլօյդի հետ կազմված նոր համաձայնութիւնը:

ՊԱՐԻԶ, 13 յունվարի: Պատգամաւորների պալատ: Սենատի վերադարձրած նախահաշիւը յանձնված է մասնաժողովին: Ժօրէսը և Րուանէն հարցապնդում են անում՝ արտասահմանեան արժէքաւոր թղթեր Ֆրանսիայում թոյլատրելու առիթով, որ վնասում է հանրապետութեան ֆինանսներին: Հետևեալ նիստը երկուշաբթի է. 14 յունվարի:

ՍՕՖԻԱ, 13 յունվարի: Օպպօզիցիան ամբողջ ուժով աշխատում է ագիտացիայով շահագործել համալսարանը փակելու գործը: Կիրակի օրը կայանալու են կառավարութեան թշնամական ժողովրդական ժողովներ: Ըստ երևոյթին օպպօզիցեան յոյս դնել աջողութեան վրա—չէ կարող:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի: Հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը մտադիր է 1907 թ. հողային բարեկարգիչ մասնաժողովների թիւը հասցնել 374-ի, և բանալ 190 նոր մասնաժողովներ գարնանը: Սկզբում մասնաժողովներ կը հաստատվեն հարաւային նահանգներում, իսկ յետոյ հիւսիսային նահանգներում:

Ներքին գործերի մինիստրութեան կից գտնվող զէմստվային բաժնում ներկայումս մշակվում է մի օրինագիծ, որի համաձայն մատակարարական գործը յանձնվելու է զէմստվային հաստատութիւններին: Մտադրվում է զէմստվօներին վերադարձնել մատակարարական գործին վերաբերվող այն ֆունկցիաները, որոնք խլված էին նրանցից 1900 թ. մայիսի 12 ի օրէնքի համաձայն: Օրինագիծը ներկայացնվելու է Պետական Դումային:

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը ձեռնարկել է որքան կարելի է ժրաջանութեամբ և արագ հասցնել հաց սովալլուկ նահանգները: Մինչև փետրվար ամիսը պէտք է տեղ հասնի ընդամենը 700,000 պուդ ցորեն:

ԼՕՆԴՕՆ, 13 յունվարի: Ռուսաստանի ընդունած վճիռը, անյապաղ դատարկել Մանջուրիան, Անգլիայում արել է բարերար ազդեցութիւն: «Րէյտէրին» բարձր շրջաններից հաղորդում են, որ այդ վճիռը Եապօնիայում բաւականութիւն է պատճառել և առիթ կը ծառայէ՝ սերտ բարեկամական յարաբերութիւններ հաստատելուն Ռուսաստանի և Եապօնիայի միջև: Ի նկատ առնելով այդօրինակ վճիռը, մեկնում են, որ Ռուսաստանը անկեղծ կերպով ցանկանում է կատարել իր պարտականութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի: Քաղաքապետը, համաձայն արտակարգ պահպանութեան որոշումների, այսօր դադարեցրեց «Страна» լրագրի հրատարակութիւնը—պրոֆեսօր Կովալեվսկու յօդուածի համար, որ նուիրված էր Լիդվալի գործին:

ԲԵՐԼԻՆ, 13 յունվարի: Ցերեկվայ ժամը 4-ին տեղեկութիւններ են ստացվել 202 վիճակներում կայացած ընտրութիւնների հետևանքների մասին: 110 վիճակում ընտրութիւններն արդէն վերջացել են, 92-ում տեղի է ունենալու վերստին քուէարկութիւն: Ընտրվել են կենտրոնականներ 34 հոգի, 20 սօցիալ-դեմօկրատներ, 18 պահպանողականներ, 14 ազգային լիբերալներ, 7 հոգի կայսերական կուսակցութիւնից, 5 լեհ, 5 ազատամիտներ—ժողովրդական կուսակցութիւնից, 1-ական հոգի անկախ պահպանողական և լիբերալ: Վերաքուէարկութեանը մասնակցում են 57 սօցիալ-դեմօկրատներ, 40 ազգային-լիբերալներ, 20 ազատամիտներ, 19 կենտրոնականներ, միքանի հոգի ուրիշ կուսակցութիւններից: Կենտրոնը տարաւ մէկ տեղ, սօցիալիստները կորցրին 12 տեղ և տարան մէկ տեղ, ազգային լիբերալները տարան 8 տեղ, պահպանողականները՝ 5, ազատամիտները՝ 2 և կորցրին 1 տեղ, կայսերական կուսակցութիւնը տարաւ 2, կորցրեց 2 տեղ: Բեռլինում սօցիալիստները պահպանեցին 5 վիճակ: I-ին վիճակում նորից քուէարկվելու են ազատամիտ Կոմպֆնա և սօցիալիստ Արօնսը: Համբուրգում ընտրվել են 3 սօցիալիստներ, որոնց թւումն է և Բեբելը: Սաքսօնիայում սօցիալիստները կորցրին միքանի տեղեր: Մօտ կէս գիշերվայ մօտերքը պարզվեց ընտրութիւնների հետևանքը, որից յետոյ միքանի հազար հոգուց բաղկացած ամբոխը կանցլէրի պալատի առաջ հայրենասիրական ցոյց սարքեցին: Բիւլովը դուրս եկաւ, շնորհակալութիւն յայտնեց հայրենասիրական զգացմունքների համար, յիշեցրեց Բիսմարկի խօսքերը. «Նստեցրէք գերմանական ազգին թամբի վրա, նա ինքը կարող է ընթանալ»: Բիւլովի իւրաքանչիւր խօսքը ընդունվում էր որոտագին ծափահարութիւններով: Ապա ամբոխը ցրվեց կարգ ու կանոնով և հայրենասիրական երգեր երգելով:

ԲԵՐԼԻՆ, 13 յունվարի: «Լօկալ-Անցէյգըր»-ի խմբագրատան առաջ երևաց մի լուրանապաբոնտ, որ ծանուցեց, որ սօցիալ-դեմօկրատները կորցրել են 16 տեղ: Մի քանի հարիւր ամեն հասակի և դասի անձինք գնացք կազմեցին Ցիմէր-Շտրասէով, որի ժամանակ երգում էին հայրենասիրական երգեր և «կեցցէ կայսրը» բացականչութիւններով դիմեցին կանցլէրի պալատի կողմը ցոյց կազմելու համար, սակայն Վիլհէլմ-շտրասէ մտնելու ժամանակ արգելքի հանդիպեցին ոստիկանութեան կողմից:

ԲԵՐԼԻՆ, 13 յունվարի: Ընտրութիւնները վերջնական կէտի են յանգել 152 վիճակներում, 209 վիճակներում լինելու է վերաքուէարկութիւն: Ընտրվել են 46 պահպանողականներ, 11 հոգի կայսերական կուսակցութիւնից, 13 լեհեր, 69 մարդ կենտրոնի կուսակցութիւնից, 20 ազգային լիբերալներ, 5 ազատամիտներ ժողովրդական կուսակցութիւնից, 1 հոգի ազատամիտ դաշնակցութիւնից, 30 սօցիալ դեմօկրատներ, 3 հոգի բարենորոգումների կուսակցութիւնից, 8 անկուսակցականներ: Վերաքուէարկութեան մասնակցում են 25 պահպանողականներ, կայսերական կուսակցութիւնից 16 հոգի, 4 լեհ, 33 կենտրոնականներ, 57 ազգային-լիբերալներ, ազգային կուսակցութիւնից 26 ազատամիտներ, 12 հոգի ազատամիտ դաշնակցութիւնից, 74 սօցիալ-դեմօկրատներ, 5 անկուսակցականներ և 40 հոգի միւս կուսակցութիւններից: Սօցիալ-դեմօկրատները կորցրին և շահեցին երեք տեղ, ազգային-լիբերալները կորցրին 6 և շահեցին 10 տեղ: Կէնիկսբէրգում ընտրվել է ազատամիտ Գեալինգը որի ընտրութիւնը համարվում է լիբերալիզմի յաղթութիւն, որովհետև Կէնիկսբէրգում 16 տարի տարի շարունակ ընտրվում էին սօցիալ դեմօկրատները: Կանցլէրի պալատի առաջ կազմված ցոյցը շարունակվել է մինչև առաւօտ: Այնտեղից ցուցարարները դիմել են կրօն պրինցի պալատը, ուր պատժամը են եղել կրօն-պրինցը իր կողակցի հետ:

ԲԵՐԼԻՆ, 14 յունվարի: Ընտրութիւնների վերջնական հետևանքը. վերջնականապէս ընտրվել են 237 հոգի. Մնում են վերաքուէարկվելու 160 հոգի: Ընտրվել են 41 պահպանողականներ, կայսերական կուսակցութիւնից 10 հոգի, 18 լեհ, 89 կենտրոնականներ, 20 ազգային-լիբերալներ, ժողովրդական ազատամիտներից 5 հոգի, ազատամիտ դաշնակցութիւնից 1 մարդ, 29 սօցիալ դեմօկրատներ, 10 անկուսակցական և էլզասցիներ. բարենորոգումների կուսակցութիւնից 3 հոգի, Միացած կուսակցութիւններից 10 մարդ: Վերաքուէարկութեան մասնակցելու են 29 պահպանողականներ, 19 կայսերական կուսակցութիւնից, 5 լեհ, 31 կենտրոնականներ, 58 ազգային-լիբերալներ, ժողովրդական կուսակցութիւնից 27 հոգի, ազատամիտների դաշնակցութիւնից 12 հոգի, 92 սօցիալ-դեմօկրատներ, բարենորոգման կուսակցութիւնից 3 հոգի, 4 անկուսակցականներ, 38 հոգի Միացած կուսակցութիւններից:

ԲԵՐԼԻՆ, 14 նոյեմբերի: Պահպանողականները տարան 7 և կորցրին 2 տեղ. կենտրոնը տարաւ 2 և կորցրեց 4, ազգային-լիբերալները ձեռք բերին 9 և կորցրին 9 տեղ, ժողովրդական ազատամիտ կուսակցութիւնը շահեց 4 և կորցրեց 2, սօցիալ-դեմօկրատները շահեցին մէկ տեղ և կորցրին 20 տեղ:

ԲԵՐԼԻՆ, «Ֆօրվէրտսը» գտնում է, որ ընտրութիւնների հետևանքում գերմանական պրոլետարիատի յաղթութիւն բնաւ չը կայ, և սօցեալ դեմօկրատիայի անաջողութիւնը վերագրում է այն հանգամանքին, որ լիբերալները, պահպանողականները և ռէակցիօնները մի առանձին եռանդով էին գործում ձեռք ձեռքի տուած: «Նօրդդէյչէ-Ալգեմէյնէ-Ցէյտունգը» սօցեալ դեմօկրատիայի պարտութեան առիթով ցնծում է:

ՑԵՏԻՆԵ, 14 յունվարի: Րադուլօվիչի կաբինետը հրաժարական տուեց. հրաժարականը ընդունվել է իշխանից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի: Թագաւոր կայսրը ունկնդրութեան ընդունեց Միացեալ-Նահանգների դեսպան Ֆօն-դէն Գեըկէ-Մէյտէրին, որը յանձնեց հաւատարմաթղթերը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յուլիսի: Ներքին գործերի մինիստրը հաստատեց յունվարի 12 ի որոշումը, որի համաձայն երկաթուղային կայարաններում ընդունվելու են մասնաւոր հեռագրեր:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի: Պետական Դումայի ընտրութիւնները Պետերբուրգի հեռագրական գործակալութեան տեղեկութիւններից, Կալուգայի նահանգում. Մէշինսկի գաւառի 44 շրջանային ժողովներում ընտրվել են 82 հոգի, որոնց թւումն են 26 միապետականներ, 52 աջակողմեան անկուսակցականներ, 3 չափաւոր անկուսակցականներ և 1 ձախակողմեան անկուսակցական. 11 շրջանային տանուտէրեր, 2 թեկնածուներ սրանց համար, 3 շրջանային դատաւորներ, 12 շինական տանուտէրեր, 1 եկեղեցական կառավարիչ, 1 շրջանային գրագիր, 52 գիւղացի տանուտէրեր. 82 ռուսներ, որից 79 ուղղափառներ են, իսկ 3ը՝ ստարօօբրեադցիներ, 1006 ընտրողներից ներկայ են եղել միայն 772-ը:

Բօրօվսկի գաւառում. 7 ձեռնարկութիւններում ընտրվել են 7 լիազօրներ, որոնցից 1 միապետական, 4 չափաւոր անկուսակցական, 1 ձախակողմեան, բոլորն էլ ռուսներ են, ուղղափառներ և բանւորներ: Մէզինսկի գաւառում ընտրվել են 4 հոգի, որոնք բոլորն էլ ձախակողմեաններ են. 1459 ընտրողներից եկել են 642 հոգի:

Կիևվի 42 ձեռնարկութիւնների մէջ ընտրվել են 31 լիազօրներ, որոնցից 2-ը յարված են աջակողմեաններին, 28-ը ձախակողմեաններ. ըստ արհեստի—5 վարպետ, 26 բանւոր, ըստ ազգութեան—26 ռուսներ, 2 լեհ, 2 հրեայ մէկ գերմանացի. ըստ կրօնի—25 ուղղափառներ, 3 կաթօլիկներ, 1 ստարօօբրիադցի, 2 հրեայ. 7100 ընտրողներից ներկայ են եղել 4500 հոգի. 9 գործարաններում ընտրութիւնները չեն կայացել:

Խարկովի և Խարկովի գաւառում ընտրութիւնները կայացել են 44 ձեռնարկութիւններում. ընտրվել են 40 ձախակողմեան անկուսակցականներ և 4 չափաւոր անկուսակցականներ. բոլորն էլ բանւորներ են, որոնցից 42 ը ռուսներ են և 2-ը լեհ. ըստ կրօնի—42 ուղղափառ և 2 կաթօլիկ:

Կիևվի նահանգում մանր հողատէրերի լիազօրների ընտրութիւնները. Կիևվի, Բէրդիչէվսկի, Զվենիգօրօդսկի, Կանևսկի-Տարաշչանսկի, Չերկասկի և Չիգերինսկի գաւառներում ընտրվել են 211 լիազօրներ, որոնցից 33-ը միապետականներ են, 167-ը յարված են աջակողմեան կուսակցութիւններին, 3 չափաւոր անկուսակցականներ, 9 ձախակողմեան անկուսակցականներ. ըստ արհեստների—161 քահանայ, 2 վաճառականներ, 16 մանր սեփականատէրեր, 32 գիւղացի. բոլորն էլ ռուսներ են, ուղղափառներ:

Խարկովի նահանգում, Իզիւմսկի, Սումսկի և Վօլչանսկի գաւառներում ընտրվել են 81 լիազօրներ, որոնցից 41-ը միապետականներ են, 29 հոկտեմբերականներ, 1-ը չափաւոր անկուսակցական, 0 ձախակողմեան անկուսակցականներ, ըստ արհեստի—34 քահանայ, 1 երէցփոխ, զէմստվային վարչութեան 1 անդամ, 11 գիւղացի, 5 մանր սեփականատէրեր ըստ կրօնի—56 ուղղափառներ, 25 լիւթերականներ. 9204 ընտրողներից եկել են 295-ը:

Կալուգայի նահանգ Մալօ-Երօսլաւի գաւառում ընտրվել են 16 լիազօրներ, որոնցից 14-ը աջակողմեան անկուսակցականներ են և 2 ձախակողմեան անկուսակցականներ, 2 տանուտէր և 14 գիւղացի, 13 ուղղափառ, 3 ստարօօբրեացի. 696 ընտրողներից ներկայ են եղել 604-ը:

Օրլօվի նահանգ. Բրեանսկի գաւառում 21 գործարանա-ֆաբրիկային ձեռնարկութիւններում ընտրվել են 23 հոգի, բոլորն էլ բանւորներ. Կարաչէվսկի գաւառում ընտրվել են 4 հոգի, բոլորն էլ չափաւոր ռուս բանւորներ. 257 ընտրողներից եկել են 21-ը:

«Օրլի 6 ձեռնարկութիւններում ընտրվել են 6 հոգի, բոլորն էլ չափաւոր, ուղղափառ ռուսներ են:

Րիազանի նահանգում. Եգօրէվսկի, Պրօնսկի, Դանկօեվսկի գաւառներում ընտրվել են 2 հոգի, Զարայսկի, Սապօժկօվսկի, Րիազանի, Միխայլօվսկի, Սկօպինսկի գաւառներում ընտրվել են 94 լիազօրներ, որոնցից 8-ը միապետականներ են, 79-ը չափաւորականներ, 27-ը քահանաներ, 4-ը վաճառականներ, 27 գիւղացի, 36 մանր սեփականատէրեր, բոլորն էլ ռուսներ են, ուղղափառներ:

Մինսկի նահանգում. Մինսկի, Մօզերսկի և Բօրիսօվսկի գաւառների համագումարներին ընտրվել են 37 հոգի, որոնցից 10-ը միապետականներին, 27 չափաւորականներ, 13-ը քահանաներ. 1259 ընտրողներից ներկայ են եղել 497 ը: Կաթօլիկները Մինսկի ընտրութիւններին չեն մասնակցել:

Լիվէնսկի, Բօլխօվսկի, Օրլօվի, Տրուբչէվսկի, Դմիտրօվսկի և Կրօմսկի գաւառներում. շրջանային ժողովներում ընտրվել են 184 լիազօրներ, որոնցից 27 ը միապետականներ են, 126 չափաւորներ:

Րիազանի նահանգի Սկօպինսկի և Պրօնսկի գաւառներում ընտրվել են 68 լիազօրներ, որոնց թւումն են 10 միապետական, 27 սրանց յարված, 11 չափաւորներ: Երկու շրջաններում սևացել են բոլոր ձախակողմեանները:

Պետրակօվսկի նահանգի հինգ գաւառներում ընտրվել են 134 հոգի: Րատօմի նահանգի երկու գաւառներում ընտրվել են 76 հոգի, որոնցից 38-ը չափաւորներ են: Կէլցկի նահանգի Մէխօվսկի գաւառում ընտրվել են 48 հոգի:

Շրջանների բանւորների և մանր հողատէրերի լիազօրների ժողովներում 23 նահանգներում ընտրվել են առայժմ 1331 լիազօրներ որոնցից 800-ը միապետականներ են, 458-ը չափաւորականներ. Միացած կուսակցութիւններից 35 հոգին սահմանադիր ռամկավարներ են: Մանր հողատէրերի 682 լիազօրների թւից 356-ը միայն քահանաներ են:

Ամենուրեք ընտրութիւնները կատարվում են լիակատար կարգ ու կանոնով:

Պետերբուրգի 128 գործարանա-ֆաբրիկային ձեռնարկութիւններում 57209 ընտրողներից ներկայ էին 33,336-ը, որոնք ընտրեցին 138 լիազօրներ, որոնցից 134-ը բանւորներին, 130 ուղղափառներ, 5-ը լիբերալ, 2-ը լեհ-կաթօլիկ և մէկ հրեայ: Ընտրութիւնները խաղաղ անցան:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժու. խն:
Չ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ի. Կ. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
Գ. Ց. Գուրդժիօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
Գրավաճառանոցի հրատարակութիւն
Լոյս տեսաւ Սեդրակ Մանդինեանի կազմած
начальная русская
христоматія
для армянъ
դասաւանդութեան բացատրութիւններով
1. գրքոյկ
Գրքոյկը նոր ծրագրի համեմատ նշանակված է ծխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար, բայց առայժմ կարող է գործածուիլ նաև 4-րդ բաժանմունքում կամ թեմակ. դպրոցի առաջին դասարանում:
8—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնօվի № 7. պօդեզ նօտար Մղերօվի:

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԻ“
№ 2
Դոկտ. Աբդիւլլահ Ջևդէթ բէյի պատկերով
և հետևեալ բովանդակութեամբ

Մենք և Երիտասարդ-Թիւրքիան	Տ. Զաւէն
Երիտասարդ Թիւրքերի կեանքից	
Ձայն տուր ամենքին (բանաստ.)	Արփենիկ
Թիւրք սահմանադրութեան կայսերական հրովարտակը, Օսմանեան գերդաստանը	Աբդուլլահ Ջևդէթ
Ռուսիահակ Թրքահայերուն	Արտեմիս
Աբդիւլ-Համիդի ներքին կեանքը	Սէֆէր բէյ
Վոսփորի ափերէն, մինիստրները	X Թէվֆիկ
փաշա, (արտաքին գործերու մինիստր)	Ուրկամ
Մաժուլի շուրջը	
Թղթակցութիւններ	
I Նամակ Երզրումից	
II Նամակ Տրապիզոնէն	
Լուրեր	
Խմբագրութեան կողմից	
Յայտարարութիւններ	

Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը
սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրին, որ 1907 թեի յունվար ամսից
տրվում է վարձով
Ռուսսկի փողոցում գտնված դպրոցապատկան նորակառոյց կալուածքի վերին յարկի 21 սենեակները, միջին յարկի 21 կրպակները և ներքին յարկի նկուղները երեք բաժանմունքով. Ցանկացողները պայմաններին կարող են ծանօթանալ տնտեսական կառավարիչ Կարապետ Գասպարեանից ամեն օր ցերեկվայ ժամը 10-ից մինչև 2 ը:
Ե. Հ. 2—2

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում վաճառվում են
Օրացոյցներ պատի եւ ծոցի.—Լոյս—Թօփչեանի, Շիրակ—Աֆինեանի, Զմշկեանի, Էջմիածնի: Գինը պատինը 50 կոպէկ, ծոցինը 20 կ.:
Кавказскій Календарь ռուսերէն [illegible] կազմած 1 ր. 50 կ.:
Кавказскій Календарь պատի ռուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն 1 ր.:
Календарь для учителей 1 ր. 50 կ.:
Սեղանի օրացոյց.—Զմշկեանի 40 կ.:
Առանց կանխավճարի վերադիր վճարով չէ ուղարկվում:
Նոյն տեղը վաճառվում են
Հ. Միրախեանի «Դեռահասների ազատ ընթերցանութիւնը» 40 կ.:
Նոյնի «Դեռահասներն ինչ կարդան» 350 յանձնարարելի ու մերժելի գրքերի մատենախօսական ցուցակ. միայն 100 օրինակ ստացված է դպրոցական մատենադարանների համար. գինը 25 կ.:
Դիմել՝ Книж. магазинъ Гуттенбергъ Г. Галустяну, въ Тифлисѣ.
2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. շ.) 14—100

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8: Կանանց համար 12—1 ժամը:
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Գաւկեվիչի փողոցների,, № 33/15:
(ա. օ.) 88—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12 - 1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց № 16:
(ու. կ. չ.) 9—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Ջախարբեգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ
Տելէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 84—150

Երկու տարի ժամանակով ընտանիքիս մէջ
ՀԱՐԿԱՒՈՐ Է
մի հայ երեխայասէր
Վարժուհի
երեխաներիս հետ պարապելու, ապրուստը կը լինի ընտանիքիս հետ միասին, հարկաւոր է
նաև մի հայ
Խոհարարուհի
ցանկացողները պայմանների վերաբերեալ կարող են դիմել ինձ. Станція Омскъ Сиби. ж. дар. Азарапетъ Агаянцу.
2—5

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ՆԵՐՎԱՅԻՆ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
49—100

ՆՈՐ ԿԱԶՄՎՈՂ
Նաւթարդիւնաբերական „ԱՆՕՆԻՄ“ ընկերութեան
գրասենեակը գտնվում է Ֆրէյլինսկի փողոցում, № 2 տանը, Փրիդոնօֆների բանկային գրասենեակի հանդէպ:
ՊԱՅԵՐԻ ԳՐՎԵԼԸ
Սկսվում է այս յունվար ամսի 15-ի ժամը 10-ից և կը վերջանայ 17-ին ժամը 2-ին:
Պայեր գրվելուն պէտք է վճարել 25 րուբլի ամեն մէկ պային:
Գործին ծանօթանալ ցանկացողները կարող են նոյն գրասենեակում ստանալ ցիրկուլեարներ:
(շ. ե.) 2—2

Ֆինանսների նախարարութեան հաւանութեան տակ գտնուող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում:
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում:
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր ուղագրութիւն (стеографія):
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9 ից մինչև 11-ը առաւօտեան: Պարապմունքները սկսվելու են յունվարի 15-ից, 1907 թ. պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրն ուղարկվում է ձրի:
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ:
Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար:
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н.В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր:
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում
Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին առանց պօստի ծախս վճարելու. Գինն է 3 ր. 50 կոպէկ: (Հ.կ. ե.) 15—20

Բացված է բաժանորդագրութիւն
1907 թ.
„ՁԱՅՆ“
Քաղաքական, հասարակական եւ տնտեսական շաբաթաթերթ
«ՁԱՅՆ»-ը պիտի պաշտպան հանդիսանայ և արտայայտիչը լինի արդիւնաբերական և գիւղացիական բանւորների դասակարգային շահերի, քաղաքական և տնտեսական կեանքում:
ԲԱԺԱՆԵԳԻՆՆ Է

ԹԻՖԼԻՍՈՒՄ		ԹԻՖԼԻՍԻՑ ԴՈՒՐՍ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ	
Տարեկան	3 ր. —	Տարեկան	3 ր. 50 կ.	Տարեկան	4 ր. 50 կ.
Կէս-տարի	1 ր. 60 կ.	Կէս-տարին	2 ր. —	Կէս-տարին	2 ր. 50 կ.
Ամսական	30 կ.	Ամսական	35 կ.	Ամսական	45 կ.
Համարը	7 կ.	Համարը	8 կ.		

ԲԱՆՒՈՐՆԵՐ, ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՒԵՑԷՔ ՁԵՐ ԹԵՐԹԻՆ!
Հասցէն՝ Тифлисъ. редакція «Дзайнъ», Малая-Ванкская, № 4. Արտասահմանից՝ Tiflis, rédaction du «Dzaïn», Malaja-Vankskaja № 4.
3—3 Խմբագիր՝ Տ. ԻՍԱԽԱՆԵԱՆ Հրատարակիչ՝ Մ. ԴՕԼՕԼԽԱՆԵԱՆ

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5